

ԿՈՌԻՆԿ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԼՈՒՍԱԻՈՐՈՒԹԵԱՆ

Դ՝ ՏԱՐԻ՝ 1863 թԻԻ ԺԲ՝

Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր

Գ Ի Զ Օ

ՊԼՏՄԱԿԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

Ո Ր

Յ Ե Ի Ր Ո Պ Ի Ա

ՉՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԴԱՍ՝

Նիւթ ուսման. — Անդիւոյ քաղաքակրթութեան և ցամաքային Եւրոպիոյ քաղաքակրթութեան ընթացքուն եղած պլանայութիւնն ու իրերանմանութիւնը. — Ֆրանսիոյ առաւելակրթութիւնը Եւրոպիոյ մէջ թիւ և թԸ դարերումը. — Ժէ դարումը, Ֆրանսիական կառավարութեան կողմանէ. — ԺԸ դարումը նոյն իսկ երկրին կողմանէ. — Լուդովիկոս ԺԴ-ի կառավարութեան վրայ. — Իր արած պատերազմներուն վրայ. — Իր քաղաքականութեան վրայ. — Իր քաղաքային տնօրէնութեան կամ տնտեսութեան վրայ. — Իր օրէնագրութեան վրայ. — Իր շուտով ընկնելու պատճառները. — Ֆրանսիոյ մասին թԸ դարումը. — Իմաստասիրական յիշատակութեան իսկական կերպարանքը, — Աւարտ ուսման :

Պարոնայք,

Փորձ արի, մեր նախընթաց ժողովքումը, Անդիւոյ յիշատակութեան մշտարիտ կերպարանքն ու քաղաքական նշանակութիւնը սահմանել: Հանաչեցիք, որ Անդիւոյ յիշատակութիւնն երկու մեծամեծ

* Տէս կռնական նախընթաց թուերումը.

իրերու իրար հանդիպին ու իրար խփեն էր եղել, որոնց մէջ եկեղ
աւիտիութիւն էր, ԺՁ զարու ընթացքումը և նախնական Յօրոյիոյ
ամբողջ քաղաքակրթութիւնը, մին կողմանէ բուն միապետականու-
թիւնը, միւս կողմանէ էլ ազատ քննողութիւնը: Այս երկու զօրու-
թիւններն առաջին սնդամ Անդլիումն իւր հետ կուուցան: Այս
բանից, ումանք կամեցան մի արմատական տարբերութիւն հետեւնել
Անդլիոյ ընկերական վիճակին և ցամաքային Յօրոյիոյ ընկերական վի-
ճակին մէջ, ումանք սկզբեցին, որ ոչ մի համեմատութիւն կարելի չէր
անել այնքան այլևայլ վիճակներ ունեցող երկիրների մէջ, հաստա-
տեցին էլ, որ Անդլիայոց ազգը մի առասկ բարոյական առանձնա-
կանութեան մէջ էր ապրել, ուման իր բնական առանձնականութեան:

Ճշմարիտ է, Անդլիական քաղաքակրթութեան և ցամաքային
աէրութեան քաղաքակրթութեան մէջ մի կարեւոր այլևայլութիւն և-
ղաւ, որուն վրայ ճիշտ տեղեկութիւն ունենալը հարկաւոր է. այս բա-
նըս արդէն կարող եղաք նշմարել մեր դասերու ընթացքումը: Ըն-
կերականութեան այլևայլ սկզբունքներու և սլոյնայլ տարբերքներու
զարգացումը, Անդլիումը գրէթէ մի և նոյն ժամանակումն և միատեղ եզան
քան թէ ցամաքային Յօրոյիումը. երբոր փորձ փորձեցի Յօրոյական քա-
ղաքակրթութեան բուն կերպարանքը սահմանել համեմատելով նախնեաց
և Ասիական քաղաքակրթութեան հետ. ցոյց տուի նրա առանձին կերպա-
կերպ, փառաւոր, խառնիխառն ըլնել և թէ ոչ մի ժամանակ էլ նրա մի
առանձնակի սկզբունք ունեցող տիրապետութեան տակ չընկնելը և թէ
ընկերական վիճակին այլևայլ սկզբունքները իրա միջում միաւորուած մա-
քառուած և շափաւորուած էին եւ թէ անդադար պարտաւորուած
էին իրարու հետ միաբան ըլնել և միասին ապրել: Այս իրն, պարո-
նայք, որնոր Եւրոպական քաղաքակրթութեան ընդհանուր կերպա-
րանքն է, զլիաւորապէս և Անդլիական քաղաքակրթութեանն էլ էր:
Անդլիումն է, որ այս կերպարանքը աւելի յայտնի և հետանքով յառաջ
եկաւ, այն տէրն է, որ քաղաքային կարգն ու կրօնական կարգը,
ազնուականք, ժողովրդականք և թաղաւոր, տեղական և կեդրոնական
օրէնքներն ու կարգերը, բարոյական և քաղաքական զարգացումը,
միասին յառաջ քայլեցին և միասին մեծացան. եթէ ոչ հաւատարարա-
դութեամբ, զմեզ մինը միւսից մի փոքր յետոյ կամ յառաջ. Տու-
զօրեան ցիղին թաղաւորութեան ժամանակ, օրինակի համար, բուն
միատեղականութեան ամենափառաւոր յառաջադիմութեան մէջ, և-
րեան է դուրս գալի ժողովրդական սկզբունքը, ժողովրդային իշխա-
նութիւնը, որ նոյն և մի ժամանակումը ծաղում յառաջանում, ամ-
բանում է: Ժէ զարու յեղափոխութիւնը յայտնուում է, որնոր միանդա-
մայն կրօնական և քաղաքական է ըլնում, աւատային ազնուականներն
էլ սաստիկ ակտրացած են երևում և կործանուելուն շաններ են ցոյց տալի:
Սակայն տակաւին միկարդ սլահպանելու կարող են ըլնում և իրանց կարգումը

ներու մի և նոյն ժամանակումը և միասին զարգանալը շատ նպաստաւոր եղած չըլնի Անգլիոյն հասացնելու աւելի շուտ միւս տէրութիւններին, ամբողջ ընկերութեանց նպատակին, այսինքն, մի կառավարութիւն հաստատելու, որնոր միանգամայն կանոնաւոր և ազատական ըլնի: Հենց կառավարութեան ընտելանն է ամէն շահերը և ամէն զօրութիւնները շահածել իրար հետ համաձայնեցնել և միասին ապրել տալով յաջողացնել: Արդ այսպէս էր հենց յառաջուց, մի շատ պատճառներու գուղընթացութեամբը և Անգլիական ընկերութեան այլապէս տարերքներու հանդամանքը. ուրեմն մի ընդհանրական և մի փոքր կանոնաւոր կառավարութիւն շատ քիչ զժուարութիւն ունեցաւ հաստատուելու համար: Ինչպէս որ բուն աղատութիւնը՝ ամէն շահերու, ամէն իրաւունքներու, ամէն զօրութեանց և ամէն ընկերական տարերքներու մի և նոյն ժամանակումն ու միասին յայտնուելու և դործելու մէջն է կայանում, ուրեմն Անգլիան սրանով միւս տէրութիւններին շատ աւելի մօտ էր, մի և նոյն պատճառներու համար, ազդային հոգին, հասարակաց դործքերու յաջողութիւնը աւելի շուտով յառաջ գընացին այնտեղ, քաղաքականութեան վրայ առողջ հասկացողութիւն ունենալը կայանում է ամէն բաների վրայ տեղեկ լինելուց եւ նրան գնահատելուց և նրանց ամէն մէկին նշանակութիւն տալ գիտնալուց, այս բանըս Անգլիումը ընկերական վիճակին մի հարկաւորութիւն էր եղել, եւ քաղաքակրթութեան ընթացքին էլ մի բնական հետեւանք:

Յամաքային Եւրոպիոյ տէրութեանց մէջ, ընդ հակառակն, ամէն դրութիւն, ամէն սկզբունք իր ժամանակն ունենալով աւելի ամբողջ, աւելի առանձին կերպով տիրապետելով՝ զարգացումն աւելի ընդարձակ կերպով եւ աւելի մեծութեամբ ու չքեղութեամբ եղաւ: Թաղաւորականութիւնն ու աւատային աշխուականութիւնը օրինակի համար, ցամաքային Եւրոպիոյ մէջ աւելի քաջութեամբ, լայնութեամբ և ազատութեամբ առաջ եկաւ, աղատական ամէն փորձերը աւելի ընդարձակ եւ աւելի կատարեալ եղան: Նրանից հետեւեցաւ, որ քաղաքական զաղափարները (իօսքս ընդհանուր զաղափարներու վրայ է, և ոչ դործքերու ընթացքին վրայ դրուած դատողութեան մասին) այս զաղափարներն ասում եմ, քաղաքական վարդապետութիւններն աւելի բաձր եղան աւելի զօրութեամբ զարգացան: Ամէն դրութիւն կամ կարդ դէթէ առանձին երեւալով և երկար ժամանակ զիմանալով կարելի եղաւ իրա ամբողջութեամբ նկատել, եւ իրա առաջին սկզբունքներին հասնել և յետոյ մինչեւ իր յետին հետեւանքներին դալ եւ իր վարդապետութիւնը պարզել: Ով որ մի փոքր ուշադրութեամբ կնկատէ Անգլիական հոգին, մի կրկնակի իրողութենից կյալիշատակի իրա միաքը, այն է, մին կողմանէ, առողջ դատողութեան ապահով լինելը, ճարտարամտութեան և յաջողակութեան դործ դրուելը, միւս կողմանէ, ընդհանուր

Բուն միապետականութեան , միահեծան կամ բացարձակ թագաւորականութեան սկզբունքն Սպանիոյմ էր տիրապետել կտրուիտ Ե-ին և փիլիպոս Բ-ին ժամանակները , տակաւին Ֆրանսիոյմ Լուդովիկոս ԺԴ ի ժամանակ չգարգացած : Նոյնպէս և ազատ քննողութեան սկզբունքը ԺԷ դարումն Անգլիոյմ տարածուել էր արդէն , զեռ Ֆրանսիոյմ ԺԸ դարումը չգարգացած : Սակայն բուն միապետականութիւնը ոչ Սպանիայից էր գուրս եկել , ոչ էլ ազատ քննողութիւնը Անգլիայից , Եւրոպիոյ վրայ տիրապետելու համար : Այս երկու սկզբունքները , այս երկու գրութիւնները գրեթէ փակուած մնացած էին և իրանց դուրս ընկած երկիրներումը : Պէտք եղաւ , որ Ֆրանսիոյ մէջից անց կենան իրանց տիրապետութիւնը տարածելու համար : Պէտք եղաւ , որ բուն միապետականութիւնն ու քննողական ազատութիւնը յառաջ յառաջ Ֆրանսիական ընդին յետոյ Եւրոպական լինելու համար : Ֆրանսիական քաղաքակրթութեան այս տարածիչ և յաղորդիչ հողին , Ֆրանսիոս սեպհական այս ընկերական հողին , որ ամէն ժամանակներումն երեւան է դուրս եկիլ , շատ աւելի փառաւորուեցաւ մանաւանդ այս ժամանակումը , որուն վրայ է մեր խօսքը : Այս լրին վրայ ամենէն չեմ պնդել , ձեզ արդէն որչափ իմաստութեամբ՝ այնչափ էլ փառաւորութեամբ մեկնուեցաւ այն դասերուն մէջ , որոնց համար հրատիրուծ կիք , ԺԷ դարու Ֆրանսիական գրականութեան և իմաստասիրութեան արած ազդեցութիւնը լսելու ու նկատելու : Տեսաք դուք ինչպէս իմաստասիրական Ֆրանսիան ազատութեան կողմանէ աւելի իշխողութիւն էր ունեցել Եւրոպիոյ վրայ , քան թէ ազատական Անգլիան : Տեսաք դուք , ինչպէս Ֆրանսիական քաղաքակրթութիւնն աւելի զօրծօն և ազդու էր եղիլ , աւելի հաղորդական ու տարածական քան թէ ուրիշ երկիրներումը : Ուրեմն ամենին հարկաւորութիւն չունիմ այս լրին մանր մունր բաներու վրայ երկարօրէն խօսելու , միայն այն բաներն յառաջ կրերեմ , իբրեւ իրաւունք , Ֆրանսիոյ մէջ հաստատելու արդեան Եւրոպական քաղաքակրթութեան պատկերը : Անտարակոյտ , այս ժամանակում Ֆրանսիական քաղաքակրթութեան և Եւրոպիոյ միւս տէրութեանց քաղաքակրթութեանց մէջ այնպիսի այլնայլութիւններ եղան , որոնք պէտք էր բանի անդ էի դրել թէ որ այսօր յիշաւի նրա պատմութիւնը յառաջ բերել լինէր միտքս : Բայց այնքան ըշտապով եմ անց կենում , որ պարտաւոր եմ գրեթէ ազգեր և դարեր զանց առնել , լաւ եմ համարում մի փոքր ժամանակ ձեր ուշադրութիւնը Ֆրանսիական քաղաքակրթութեան ընթացքին վրայ ամփոփել , իրաւ է թերակատար պատկեր պատկընդիլ այս , բայց սակայն Եւրոպիոյ բաներու ընդհանուր ընթացքին պատկերը կլինի :

Ֆրանսիոյ ազդեցութիւնն Եւրոպիոյ մէջ երևում է ԺԷ ԺԸ դարերումը այլնայլ երևոյթով : Առաջնայն մէջ կառավարութիւնն է ներսը

ազդերու յարձակումները մեր սահմաններու վրայ էին հասած և անհնդհատ աղետքները մեր բանակին մէջ կրկնուում էին, ներսուանց իշխանութեան և ժողովրդեան մէջ երկպառակութիւնը դրեթէ ամբողջ էր, ոչ եկամուտ և ոչ հասարակաց կարգ կար, մի խօսքով անկարգ, անկանոն ջղակտոր մի ընկերութիւն էր։ Այսպէս էր Ֆրանսիան երբ հիւստոսական կառավարութիւնը վրայ հասաւ։ Որովհետքը չէ այս կառավարութեան արած կարգից դուրս ժրութիւնը։ Այս ժրութեամբ փոքր ժամանակումը երկրին անկախութիւնը ապահովացրեց, ազգային պատիւը բարձրացրեց, անսոցութիւնն ու օրէնսդրութիւնը կարգաւորեց և գրեթէ մի կերպով ընկերութիւնը ծնեցրուց իշխանութեան ձեռքով։

Արդ պարոնայք, Ղուգովիկոս ԺԳ-ի կառավարութիւն էլ սկսելիս Ֆրանսիոյ համար մի նման բան արաւ, հարկաւ ժամանակի, միջոցների և ձեերի մեծ տարբերութեամբ բայց գրեթէ մի և նոյն հետեանքներին հերոսամուտ եղաւ և ձեռք բերաւ։

Ձեր միտքը բերէք այն վիճակն որու մէջ ընկել էր Ֆրանսիան կարգինալ Բիշլիէօյի կառավարութենից յետոյ և Ղուգովիկոս ԺԳ-ի կրտսերութեան ժամանակ (այսիքն թերահաս եղած ժամանակը)։ Սպանիացւոց բանակները միշտ սահմաններու վրայ կանգնած, երբեմն էլ ներս էին մտնում, յարձակումներ կրելու վախը գրեթէ մշտնջենաւոր էր, վերջին ծայրին էր հասել ներքին երկպառակութիւնը, քաղաքական պատերազմը։ Կառավարութիւնը ինչպէս ներսից, այնպէս էլ դրսից թոյլ, տկար և անպատիւ էր, ընկերութիւնը կտրելի էր ասել, որ այնքան սատարիկ վատ վիճակումն չէր, բայց քիչ շատ նման էր պրիմէրի (Նոյեմբերի) տառնութից յառաջ եղած միջոցին։ Այս վիճակիցն է, որ Ղուգովիկոս ԺԳ-ի կառավարութիւնը դուրս հանեց Ֆրանսիան, նրա առաջին յաղթանակները, երկիրն ապահովացրին և ազգային պատին էլ բարձրացրին։ Կամենում եմ այս կառավարութիւնն իր ղեխաւոր կերպարանքներովը նկատել, իրա պատերազմներովն իրա արտաքին յատարբրութիւններովը, իրա անսոցութեամբը և օրէնսդրութեամբը, և զուք կանանք կարծեմ, այս համեմատութիւնն որու վրայ խօսում եմ որոշուն վերիվի, բոյկարսորութիւն տալ չէի ուզում (թէ և բանիտի չեմ գնել պատմական համեմատութիւնները) կտեսնէք զուք, ասում եմ, որ այս համեմատութիւնը մի ղեխաւոր հիմունք ունի և ես էլ իրաւունք ունիմ, այդ համեմատութիւնն անել։

Նախ, Ղուգովիկոս ԺԳ-ի պատերազմներուն վրայ խօսինք։ սկզբումը։ Եւրոպիոյ պատերազմները, զիտէք (որովհետեւ շատ անգամ առիթ ունեցայ ձեր միտքը բերել) ազդերու և ժողովրդներու մեծ շարժողութիւնն էր, որոնք կամ կարօտութենից ստիպուած կամ թէ իրանց խելքնայնպէս փշուղուն և կամ թէ ուրիշ բաներից զրոգած ամբողջ ազդիր ու աղինք վեր էին կենում, երբեմն բաղձութեամբ, երբեմն խումբ

դաւորութեան առաջին ժամանակումն արածները. նրանց մէջ ճշմարիտ պատճառներ կ'ըսենք և կ'ոտնենք որ նրանք Յրանսիրոյ օգտին համար են ձեռնարկուած կամ իշխանութեան շահուն կամ թէ երկրին ատրանդութեան համար :

Հետեւանքներն իրն ակնհիւս արին, այսօրուայ Յրանսիրան դիտչատ նկատմամբ, այն Յրանսիրան է ինչպէս, որ Լուդովիկոս ԺԳ-ի պատերազմներն արին, նրա սիրած գաւառները, որոնք են Յրանչ Դոնտէ. Ֆլանդր ու Ալլամն Յրանսիրոյ հետ միաւորուած մնացին, ինչպէս խելօք աշխարհակալութիւն կայ, այնպէս յիմարն էլ կայ. Լուդովիկոս ԺԳ խելօքիցն արաւ, նրա ձեռնարկութիւնները, մինչև այն ժամանակ այնքան ճնդհանրացած յիմարահան եւ կամադաշտական դրօշը չեն կրում իրանց վրայ. եթէ ոչ միշտ մի արդար եւ իմաստուն քաղաքականութիւն, զոնէ մի յաջողակ եւ հանճարեղ քաղաքականութիւն նրա ձեռնարկութեանց մէջ եղել է :

Թէ որ Լուդովիկոս ԺԳ-ի պատերազմներից, նրա օտար տէրութեանց հետ ունեցած յարաբերութեանց և բուն իրա քաղաքականութեան վրայ անց կենանք մի եւ նոյն հետեւանքը կ'ըսենք. Պարոնայք, Եւրոպիոյն Ժէ դարու վերջերումը քաղաքականութեան ծագմանը վրայ պնդեցի. փորձ փորձեցի ցոյց տալ թէ ինչպէս կառավարութեանց եւ տէրութեանց մէջ եղած յարաբերութիւններն որոնք մինչև այն ժամանակ պատահական, երբեմնական եւ կարճատև էին, այս ժամանակներումն աւելի կանոնաւոր, աւելի երկարատև էին եղել եւ հասարակաց շահուն մի ամենամեծ հանգամանք ընկելով. ինչպէս մի խօսքով Ժե եւ ԺԶ դարու վերջերումն և այս հանգամանքը եկել եւ մի մեծ խաղ էր խաղում ղեպքերու մէջ. Սակայն մինչև Ժէ դար, ճշմարտան ասելով, քաղաքականութիւնը կանոնաւոր չէր, երկարատև դաշնակցութիւններ եւ մեծամեծ միաբանութիւններ յառաջ չէր բերել, մանաւանդ այնպիսի երկարատև միաբանութիւններ, որոնք հաստատուն սկզբունքների վրայ հիմնուած ղեպի մի հաստատուն նպատակ առաջնորդում ընէին յարաբերութեամբ. որնոր հաստատուն կառավարութեանց ճշմարիտ հոգին է. Կրօնական յեղափոխութեան ընթացքումը տէրութեանց արտաքին յարաբերութիւնները դրեթէ բոլորովին կրօնական օգտի իշխողութեան տակն էին, բողոքականներու դաշնակցութիւնն ու կաթոլիկներու դաշնակցութիւնը Եւրոպիան իրանց մէջ էին բաժանել, Ժէ դարումը, Վեստֆալիոյ դաշնադրութեանց յետոյ էր որ Լուդովիկոս ԺԳ-ի կառավարութեան աղբիւրութեան տակ քաղաքականութիւնը կերպարանք է փոխում, մին կողմանէ կրօնական սկզբունքին ունեցած առանձին աղբիւրութեանց դուրս է գալի, քաղաքական դաշնակցութիւններն ու միաբանութիւնները ուրիշ նկատմունքներով են լինում, միւս կողմանէ մի և նոյն ժամանակումն աւելի կա-

լու վրայ էր Պ. Սխանէյ այս բանին համար 400,000 լիար (ռկի) ուղեց բայց ես առաջի նրան թէ միայն 200,000 կարող եմ տալ, նա ինձ խօսք տուաւ Շովիցերայից Լուդլով անունով մի Անգլիացի պարոն բերել տալ եւ նրա հետ նոյն խորհրդի մասին խօսել »:

Յիրաւի Լուդլովի յիշատակարանին մէջ նոյն թուեցումը գտնուում է մի տուն գրուած այս մտքով:

« Ֆրանսիական կառավարութեանց մի հրատւէր ստացայ Փարիզ գնալու իմ երկրի գործքերի մասին խօսելու համար, բայց ես վստահութիւն չունիմ այս կառավարութեան վրայ » և Լուդլովն էլ իրաւ չէ գնում Փարիզ ու մնում է Շովիցերայում:

Տեսնում էք, որ թաղաւորական իշխանութեան ակարութիւնը Անգլիում, այն միջոցին Լոդովիկոս ԺԳ-ի նպատակն է լինում, ներքին երկպառակութիւններ է անուցանում, ջանք է անում հասարակապետական կուսակցութիւնը յարուցանելու, որպէս զի արդիւք լինի Կարոլոս Բ-ին իր երկրում շատ զօրաւոր լինելու: Բարիլլենի Անգլիում գնալանութեամբ զնայած ժամանակ նոյն այս իրը շատ անգամ երեւցաւ Ամէն անգամ, որ Կարոլոս Բ-ի իշխանութիւնը զօրանալու վրայ է լինում եւ աղղային կուսակցութիւնն էլ մեծաւելու կամ չնջուելու վրայ Ֆրանսիոյ դէսպանին իր աղղեցութիւնն այն կողմն է դարձնում, վրդ է տալիս դիմադիրներու գլխաւորներին, մի խօսքով կուլում է բացարձակ իշխանութեան դէմ ելնելու զալիս է Ֆրանսիոյ հակառակորդ միտերութիւն ակարացնելու վրայ: Ամէն անգամ, որ մտադրութեամբ նկատէք Լուդովիկոս ԺԳ-ի ժամանակուայ արտաքին յարաբերութեանց ընթացքը, այս իրը ձեր աչքովն կ'ընկնի:

Նմանապէս այս ժամանակուայ Ֆրանսիական յաջողականութիւնն, հարտարամտութիւնը եւ քաղաքականութիւնն էլ ձեր միտքը կ'ըրաւէ, Դը Տօրսի, Դ Աւօ, Դը Բօնրըբօ անունները ամէն ուսեալ մարդկանց ծանօթ են: Թէ որ բաղդատելու ընկնէք Լուդովիկոս ԺԳ-ի այս խորհրդականներու պաշտօնագրերը, յիշատակագրերը եւ իրանց հնարած միջոցներն ու բռնած վարմունքը, Սպանիայի, Լուսիտանիոյ տէրութեանական միջնորդների բանեցրած կերպերու հետ, կ'ըրամանաք կըմենաք Ֆրանսիոյ պաշտօնեայներու զերազանցութեան վրայ, ոչ թէ միայն իրանց խօսիմ գործունէութեան եւ գործակատարութեան վրայ այլ իրանց ազատօրէն մտածելուն: Այս միահեծան թաղաւորի պալատականները, արտաքին գործքերը, կուսակցութիւնները աղաւաղութեան հարկաւորութիւնը, ժողովրդային յեղափոխութիւնները շատ աւելի լաւ են դատում և ճիշտ են նկատում այն ժամանակուայ բուն Անգլիացիներին մեծ մասէն: Թէ դարձաւ Եւրոպիոյ մէջ Ֆրանսիական քաղաքականութեան հաւատարող քաղաքականութիւն մի միայն Հոլլանդիականն էր, Ժան դը Վիտի և Կլիւիօմ դ'Օրանսի, որոնք քաղաքական եւ

կրօնական աղատութեան հռչակաւոր զլիաւորներն էին, պաշտօնեայ-
ները միայն կարող էին լինում դէմ դնել միահեծան թագաւորին ծա-
ռաներուն:

Տեւնում էք, պարոնայք, Ղուղովիկոս ԺԳ-ի թէ պատերազմները
և թէ քաղաքական յարաբերութիւններն որ նկատելու ընենք, նոյն և
մի հետեանքն գտնելու կհասնենք: Այժմանք, թէ ինչպէս մի կառ-
ավարութիւն, որ այսպէս յառաջ էր տանում իր պատերազմները և
իր բանադնացութիւնը Եւրոպայ մէջ, պէտք էր որ մի մեծ հաստատու-
թիւն առնէր և ոչ թէ միայն ահաբեկու երեւար, այլ նաեւ խորագետ և
պատկառելի:

Գարձնենք մեր աչքը Ֆրանսիոյ ներքին զրութեան վրայ: Լու-
ղովիկոս ԺԳ-ի տեսչութեան (Administration) և օրէնսդրութեան վրայ
այնտեղ էլ նոր նոր ապացոյցներ կգտնենք նրա կառավարութեան զօ-
րութեան և փառաբորութեան նպատակով:

Գժուարին է սահմանել ճշտութեամբ, թէ ինչ պէտքէ խմանաք
մի տէրութեան կառավարութեան մէջ եղած տնօրէնութիւնը կամ տես-
չութիւնն ասելով: Սակայն երբ մարդ միտք կանէ այս բանի վրայ մի
տեղեկութիւն ունենալու, կարծեմ հենց մի ընդհանուր հայեցողութեամբ
կխմանայ, որ տեսչութիւնը այն միջոցներու վրայ է հաստատուում,
որոնք սահմանուած են որչափ կարելի է ստատիկ արագութեամբ
և ամենաապահով կերպով կենդրոնական կառավարութեան կամքը ընկե-
րութեան ամէն մի մասին հաղորդելու, նմանապէս նոյն միջոցներով էլ ըն-
կերութեան զօրութիւնները, թէ մարդ է եղել և թէ միող կենդրոնա-
կան կառավարութեան ձեռքին տանելու: Այս է եթէ չեմ սխալւում,
քաղաքային տնօրէնութեան կամ տեսչութեան ճշմարիտ նպատակն ու
զլիաւոր նշանակութիւնը: Սրանով տեսնում ենք, որ այն ժամանակ-
ներումն երբ հարկաւոր է ըլնում ընկերութեան մէջ միութիւն և կար-
գաւորութիւն հաստատել, տեսչութիւնն է այն մեծ միջոցն որով կա-
րելի է ըլնում նոյն ընկերութեան մէջ եղած անմիաբան և ցիրուցան
տարերքները իրարու մօտեցնելու և իրար հետ միաւորելու և ամրա-
ցնելու յաջողելու համար: Այս էր յիրաւի և Ղուղովիկոս ԺԳ-ի տեսչու-
թեան դրօժը, մինչև իրա ժամանակն, ինչպէս Ֆրանսիոյ մը նոյնպէս և
Եւրոպայ ուրիշ տեղերումը կենդրոնական իշխանութեան դրօժողութիւն
ընկերութեան ամէն մասին մէջ ազդել տալու նման և կենդրոնա-
կան իշխանութեան մէջ էլ ընկերութեան զօրութիւնը ամրութիւն տալու
գժուարին բան չկար: Այս բանիս համար էր, որ Ղուղովիկոս ԺԳ
աշխատեցաւ և մինչև մի աստիճան յաջողեցաւ անհամեմատ կերպով
լաւ՝ նախորդ կառավարութիւններից: Այս բաներս մանրամասն յառաջ
չեմ կարող բերել, բայց զարձրէք ձեր աչքը ամէն տեսակ հասա-
րակաց պաշտօններու և ծառայութեան վրայ, հարկերը, ճանա-

պարհները , արհեստները , գլխավորական անստութեան և որ է տեսչութեան մի մասին պատրիարք ամեն կարգադրութեանց վրայ . դրեթէ ոչ մէնը չկայ , որուն թէ սկզբնաւորութիւնը , թէ զարգացողութիւնը և թէ կատարելագործութիւնը , Լուդովիկոս ԺԳ-ի թագաւորութեան ժամանակումը չզանէք : Իրա ժամանակուայ մեծ մադրիկը Գոլլերս , և Լուվուա , իբրև անօրէն կամ տեսուչ ցոյց տուին իրանց հանճարն ու դործ գրին իրանց պաշտօնը և այս բանովն է որ Լուդովիկոս ԺԳ-ի կառավարութիւնն էլ այն ընդհանրութիւնը , այն ուղղութիւնը և այն հաստատութիւնը ստացաւ , որնոր իրա շորս կողմն եղող ամեն կառավարութիւններն էլ չունէին :

Օրէնսդրութեան կողմանէ էլ , այս թագաւորութիւնը մի և նոյն իբրը երևան կհանէ ձեր առաջը : Վրայ եմ դալի նորից այն համեմատութեան , որ սկսելիս խօսեցայ , մեր հիւպատոսական կառավարութեան զօրութեան , նրա օրէնքները քննելու ուղղելու և փոփոխելու համար արած կարիցի դուրս աշխատութեան : Արա նման մի աշխատութիւն էլ Լուդովիկոս ԺԳ-ի ժամանակն եղաւ , իրա հրատարակած օրէնքները , ինչպէս են , պատժական օրէնքները , դատատանական օրէնքները , վաճառականութեան , ծովային , դետերու և անտառներու համար եղածները ճշմարիտ օրէնքներ են և մեր օրէնքներու նման չինուեցան տէրութեան խորհրդին մէջ քննութեան առարկայ անելով Լամբանիօնի նախագահութեամբ : Մարդիկ կան , որոնց ժառքն այս աշխատութեան և այս առարկութեան մէջ մասնակից ըլնելն է , օրինակի համար , սրտոն Բիւսսօրտ , թէ որ կամենայլնք նկատողութիւն անել շատ բան կունենայլնք ասելու Լուդովիկոս ԺԳ-ի օրէնսդրութեան վրայ , այնքան թէրութիւններով լիքն է որչայտնի երևում են այսօր և ոչ ոք էլ չի կարող ուրանալ : Այս օրէնսդրութիւնը ամենեկին բուն արդարութեան և ազատութեան օգտին համար չէ մտածուել այլ ժողովրդեան կամ հասարակութեան մէջ կարգ և կանոն պահելու համար և օրէնքներին էլ աւելի կանոնաւորութիւն և հաստատութիւն տալու համար , բայց մինակ այս՝ այն ժամանակ յառաջադիմութիւն էր և չէ կարելի տարակուսել որ Լուդովիկոս ԺԳ-ի օրէնքները յառաջուայ վիճակին վրայ շատ բարձր լինելով , անհնարին կերպով նպաստաւոր եղած չըլնին Ֆրանսիական ընկերութիւնը քաղաքակրթութեան ընթացքին մէջ յառաջացնելու :

Տեսնում էք , Պարոնայք , ինչ աչքով որ նկատելու ըլնենք այս կառավարութիւնը նրա զօրութեան և ազդեցութեան աղբիւրները շուտով կզանենք : Ճշմարիտն ասելով , այս եղաւ առաջին կառավարութիւնը , որ Յւրոպիոյ աչքին իբրև իր դործքին տէր և ապահով իշխանութիւն և իր գոյութեան համար ներքին թշնամիների հետ կռուելու չունեցող երևեցաւ , հանգարտ իր երկրին վրայ , իր ժողովրդեան

հետ միայն կառավարելու հոգ տանող : Բոլոր Եւրոպական կառավարութիւնները մինչև այս ժամանակներս , անդադար պատերազմներու մէջ էին մղուել , որոնք իրանց ոչ ապահովութիւն և ոչ ղրբութիւն էին տալի , կամ թէ այնպէս պաշարուած էին ներքին կռուակցութիւններէրց և թշնամիներից որ իրանց բոլոր ժամանակն իրանց կեանքի համար էին պատերազմում : Լուդովիկոս ԺԳ-ի կառավարութիւնն առաջինն եղաւ առանձին իր գործքերով պարսպող և իբրև մի հաստատուն և յառաջացող կառավարութիւն չի վախեցող նոր նոր բաներ անելու , նրա համար , որ ազդեցային վրայ վստահ էր , եւ յիրաւի շատ քիչ կառավարութիւն զանուեցաւ որանման նորոգութիւններ անող , համեմատեցէք զբանմի նոյն և մի անգակ կառավարութեան հետ , օրինակի համար Սպանիոմը Փիլիպպոս Բ-ի միապետութեան հետ : Նրա միապետութիւնը շատ աւելի բացարձակ եւ ինքնիշխան էր Լուդովիկոս ԺԳ-ի միապետութենից , սակայն որա չափ կանոնաւոր և հանդարտ չէր : Ընչպէս էր Փիլիպպոս յաջողել Սպանիոմը բացարձակ իշխանութիւնը հաստատել , երկրին գործունէութիւնը ջնջելով , ամէն բարեկարգութիւն խափանելով և Սպանիոյ տէրութիւնն անշարժուն անելով : Ընդ հակառակն Լուդովիկոս ԺԳ-ի կառավարութիւնը շատ գործունէայ երեկեցաւ որ և է նորոգութիւն անելում , շատ նպատաւոր եղաւ զպրութեանց արհեստներու և հարստութեան , մի խօսքով քաղաքակրթութեան յառաջանալուն , որանք են իրա Եւրոպիոմ ունեցած առաւելակշռութեան պաճառները , մի այնպիսի առաւելակշռութեան , որնոր ցամաքային երոպիոմ բոլոր Ժէ դարու մէջ՝ ոչ թէ միայն թագաւորներու համար , այլ և ազգերու համար էլ կառավարութեան օրինակ ու պատկեր եղաւ :

Հիմա հարցնում ենք և անկարելի է , որ չհարցնենք , ինչպէս մի այսպիսի վառատոր և լաւ հաստատուած իշխանութիւն , իմ ձեր աչքին առաջը զրածից զստեւելով : հարցնում ենք , ասում եմ , ինչպէս այս իշխանութիւնն այնպէս շուտով մի այնպիսի կործանման մէջ ընկաւ : Ինչպէս , Եւրոպիոմն մի այնպիսի խաղ իրադուրեց յետոյ , հետեւեալ դարումն այնքան անհաստատ եւ երերուն , այքան տկար , անկարգ և խառնիխառն եղաւ : Իրն անուրանալի է : Ժէ դարումը Ֆրանսիական կառավարութիւնն իւրապական քաղաքակրթութեան զլուխն է անց կացած , ԺԸ դարումն աներեւոյթ է ըլնում , Ֆրանսիական ընկերութիւնն է , որ իր կառավարութենից բաժանուած , շատ անգամ նրան դէմ էլ կանգնած , յառաջ է դնում և առաջնորդում իր առաջադիմութեանն Եւրոպական աշխարհը :

Հէնց այստեղն է որ բացարձակ իշխանութեան անուղղելի թերութիւնն ու անխալալեան ազդեցութիւնը կդանենք : Լուդովիկոս ԺԳ-ի կառավարութեան արած սխալների մէջ չեմ մոռնել , շատ մեծ սխալներ գործեց , ոչ Սպանիոյ յաջորդութեան համար արած պատերազ-

մեկերին , ոչ Նանտի հռովարտակն յեա առնելուն , ոչ արած չափազանց ծախսերին և ոչ էլ ուրիշ աղետալի բաների վրայ կխօսեմ , որոնք իր բաղդն շտանգումը դրին , այս կառավարութեան արժանաւորութիւններն , ինչպէս որ ես ձեզ ցոյց տուի հիմա , այնպէս կընդունիմ միաբանում եմ նա և , որ կարելի է երբէք մի բացարձակ իշխանութիւն այնքան լիովին իր երկրին և իր աղղին նուիրուած չի լինի և ոչ էլ այնքան ճշմարիտ ծառայութիւններ արած իր երկրին և առ հասարակ Եւրոպիոյ քաղաքակրթութեան : Արդ , Պարոնսք Բէնց միայն սրա համար է , որ այս կառավարութիւնս ուրիշ սկզբունք չունէր բացարձակ իշխանութեանից և միայն այս հիման վրայ էր կենում , իր կործանումն արագ և ըստ արժանւոյն եղաւ : Լուդովիկոս ԺԴ-ի ժամանակուայ Զբանսխան հաստատուն և չարունակ ներդրածելու և զիմանալու կարող կարգեր , կանոններ , օրէնքներ և քաղաքային զօրութիւններ չունէր : Ֆրանսական հին կարգերն ու օրէնքներն թէ որ արժանի են այս անունները կրելու , էլ չկային , Լուդովիկոս ԺԴ նրանք բոլորովին կործանեց և բնաւ հոգ չարաւ նրանց տեղ նորերը դնելու հետամուտ լինել : Նրա համար , որ իրան կենդացնէին և Լուդովիկոս ԺԴ չէր ուզում նեղացած ընելու Այս ժամանակումը մեծ փառաւորութեամբ երևածն է կենդանական իշխանութեան կամքն ու գործը , կամ թէ աղղեցութիւնն ու կամեցողութիւնը : Լուդովիկոս ԺԴ-ի կառավարութիւնը մի մեծ իր է մի փառահեղ և զօրաւոր իր , բայց անհիմն ու անարմատ : Ազատական կարգերն ու օրէնքներն երաշխաւորութիւն են ոչ թէ միայն կառավարութեանց խմատութեան համար , այլ նաև իրանց տեսականութեան : Ուրտեղ , որ բացարձակ իշխանութիւնը տեսել , զիմացել է : Նրա համար է որ ճշմարիտ և հաստատուն կարգերու և օրէնքներու վրայ է եղել կրթութեամբ , երբեմն ամուր կերպով քատ , քատ , կամ թէ կարգ կարգ բաժանուած ընկերութեան վրայ , երբեմն կրօնական օրէնքներու և կանոններու դրութեան վրայ հիմնուելով : Լուդովիկոս ԺԴ-ի թագաւորութեան ժամանակ ինչպէս իշխանութիւնն այնպէս էլ ազատութիւնը բուն երկրային , հաստատուն օրէնքներ ու կանոններ չունեցան : Այս ժամանակներում Ֆրանսիում ոչ ինչ չկար , որ երկիրն կառավարութեան ապօրինաւոր ներդրածութեան դէմ երաշխաւորէ , և ոչ էլ կառավարութիւնը ժամանակին անհրաժեշտ աղղեցութեան դէմ պահպանէ : Նրա համար էլ կառավարութիւնն ինքն իր աչքովը տեսաւ իր կործանուելը . ծերացողը միայն ինքը Լուդովիկոս ԺԴ-ն չէր , ինքը չէր , որ իր թագաւորութեան վերջերումը տկար դնուեցաւ , այլ ամբողջ բացարձակ իշխանութիւնը : Ինչպէս ինքը միահեծան թագաւորը հնացել մաշուել էր , այնպէս էլ բուն միապետականութիւնը 1712 թովին հալել ու մաշուել էր , և չարիքն այնքան աւելի ծանր էր , որքան որ Լուդովիկոս ԺԴ մարդկային բոլոր-

քըն ու վարքն ապականել և քաղաքային կարգերն ու օրէնքները խանդարել էր։ Առանց ազատութեան քաղաքային վարք ու բարք չկայինքն իրանով իրան զօրաւոր զգացողը միայն կարող է միշտ, թէ իշխանութեան ծառայել ևս թէ հարկին իշխանութեան դէմ կռուել։ Մարդկանց ազդու ևս զօրեղ բնաւորութիւնն աներեւոյթ կլինի ազատ ու անկախ դրութեանց հետ ևս հոգւոյ մեծութիւնն ու անձին ազնուութիւնն իրաւունքներն ապահով լինելուց կծնին։

Ահա՛ ճշմարտան առեւելքն ուր վիճակն էր, որու մէջ Նուդովիկոս ԺԴ թողուց Ֆրանսիան և իշխանութիւնը։ Հարստութեան, զօրութեան և ամէն տեսակ մտաւորական մեծ դարգացման մէջ եղող մի ընկերութիւն։ այս զարգացման մէջ եղող ընկերութեան կապին մի կառավարութիւն բոլորովին անշարժուն և մնայուն, որ ամենեւին հնարք ևս միջոց չունի նորոգուելու ևս իր ազդին շարժումն քնն հետ միասին գնալու ևս կէս դար մեծ փառաւորութիւն վայելելուց յետոյ, անշարժունութեան ևս թուլութեան անձնատուր եղած, արդէն իր հիմնադրի կենդանութեան ժամանակ մի այնպիսի կործանման մէջ էր ընկել, որնոր գրեթէ քանդման ևս կործանման էր նմանում։ Այս դրութիւնն է, որու մէջ էր գտնուում Ֆրանսիան ԺԷ դարուց դուրս գալիս ևս որնոր յետագայ ժամանակին վրայ էլ այնքան տարբեր ուղղութիւն և բնաւորութիւն դրոշմեց։

Թէ մարդկային հաճարի եռանդն է եղել, և թէ ազատ քննողութիւնը ԺԸ դարուն զլխաւոր նշանն ու էական իրը, հարկ չէ ասելը։ Արդէն, պարոնայք, շատ լսեցիք այս բեմիս վրայ մի խնայտասէր ատենաբանի ևս մի ճաջ տաքախօս խնայտասիրի բերնեբիցն այս զօրաւոր ժամանակին բուն նշանակութիւնը, չեմ կարող այս մնացած քիչ միջոցումը ձեր յառաջը բերել այն ժամանակուայ կատարուած բարոյական մեծ յեղափոխութեան ամէն կերպարանքները, սակայն չեմ էլ ուզում ձեզանից բաժանուել առանց զբաւելու ձեր ուշադրութիւնը մի քանի շատ քիչ նկատուած բաների վրայ։

Առաջինն, այն որ յառաջ աչքիս տակովն է ընկնում և որնոր մի փոքր յառաջ ցոյց տուի, ԺԸ դարու ընթացքումը, կառավարութեան գրեթէ բոլորովին աներեւութեանալն ու մարդկային հանճարոյն իբրեւ զլխաւոր ևս գրեթէ միայնակ գործող անձն երեւալն է։ Բացի այն որ Ղիւք դը Շուաղէօլի պաշտօնէութեան ժամանակուայ արտաքին յարաբերութեանց կնայի, ևս մարդկային հանճարոյն ընդհանուր ուղղութեան համար տուուած մի քանի շնորհումներից, օրինակի համար Ամէրիկայի պատերազմի մէջ, բացի, ասում եմ, այս տեսակ մի քանի ղեպքերու մէջ, կարելի է որ երբեք մի կառավարութիւն չէ գտնուել, որ այնքան թոյլ ևս այնքան անշարժուն լինի, ինչպէս էր այս ժա-

մանովկուայ Գրանսիական կառավարութիւնը, լուրով իկոս Ժ.Դ. ի այն գործոն. Ժիր եւ փառաւոր կառավարութեան տեղ, որնոր ամէն տեղ էր, ամէն բանի զլուխն էր անց կենում, մի կառավարութիւն է յաջորդում որ միայն իրան ջնջելու, մի անկիւնումը պահուելու է աշխատում այնքան իրան ակար եւ վտանգուն ընկած է զգում, գործունէութիւնն ու փառաւորութիւնն երկրին կամ ազգին կողմն է անց կենում: Երկիրը կամ ազգն է, որ իր կարծիքով իր մտաւորական շարժողութեամբ, ամէն բանի խառնում, ամեն բանի մէջ մտնում տէր լինելով վերջապէս բարոյական իշխանութեան, որնոր ճշմարիտ իշխանութիւնն է:

Մի երկրորդ հանգամանք էլ որ աչքիս տակովն է ընկնում նախապէս մարդկային հանճարոյն վիճակին մէջ Ժ.Ը դարումը, ազատ քննողութեան ընդհանրականութիւնն է: Մինչեւ այս ժամանակ եւ մասնաւորապէս Ժ.Զ դարումը, ազատ քննողութիւնը մի սահմանաւոր եւ մասնաւոր դաշտունն էր գործ տեսել, իրա առարկան էր եղած երբեմն կրօնական խնդիրները եւ երբեմն էլ թէ Կրօնական խնդիրները եւ թէ քաղաքական խնդիրները միասին: Բայց իր պահաջմունքներն ամէն բանի վրայ չէր տարածուում: Ժ.Ը դարումը, ընդհակառակն ազատ քննողութեան կերպարանքը ընդհանրականութիւնն է. կրօնը, քաղաքականութիւնը, բո՛ւն փոխափայտութիւնը մարդն ու ընկերութիւնը, բարոյական եւ նիւթական բնութիւնը, ամէն բան միանգամայն, ուսման, տարակուսի. քննողութեան եւ զրութեան առարկայ է ըլնում, հին դիտութիւնները կործանուում են, նոր դիտութիւնները բարձրանում: Մի այնպիսի շաժոնէութիւն է ըլնում, որ ամէն կողմ դիմում է, թէպէտ եւ մի եւ նոյն թեւադրութիւնից է յառաջ գալի:

Այս շարժունէութիւնը եւ մի անմասն հանգամանք էլ է ունենում որնոր կարելի է երկրորդ անգամ չէ պատահել աշխարհիս պատմութեան մէջ. այն է իր լոկ նկատողական կամ տեսական վարդապետութիւն լինելը: Մինչեւ այս ժամանակ, մարդկային ամէն մեծամեծ յեղափոխութեանց մէջ, անդիցութիւնը շուտով նկատողութեան մէջ էր խառնուել: Ինչպէս Ժ.Զ դարումը կրօնական յեղափոխութիւնը զաղափարներով եւ լոկ մտաւորական վիճաբանութեամբ էր սկսել, բայց փարհերով եւ լոկ մտաւորական վիճաբանութեամբ էր սկսել, բայց շուտով էլ դէպքերու մէջ էր ամփոփուել: Մտաւորական կոտակցութեանց գլխաւորներ էին դարել, մարդու կենաց իրերը մարդու խելքի աշխատութեանց հետ խառնուել էին: Այսպէս էր պատահել նա եւ Ժ.Է դարումը եւ Սնդկոյ յեղափոխութեան մէջ: Գրանսիում Ժ.Ը դարումը կտեսնաք, որ մարդկային խելքը ամէն բանի մէջ բանում, գործ է տեսնում. մարդու կենաց բո՛ւն շահերու հետ կապուած դադափարներու մէջ, որոնք պէտք էր, որ իրերու վրայ շատ շուտով ամենազօրաւոր անդիցութիւն

անել, Բայց սակայն այս մեծ կռիւներուն առաջնորդներն ու գործողները, օտար եւ հեռու են կենում որ եւ է գործնական ազդեցութիւն անելուց, լոկ նկատող վարդապետներ են ըլնում, դատում ու խօսում են առանց դէպքերու մէջ խառնուելու: Ոչ մի ժամանակ իրերու եւ արտաքին բաներու կառավարութիւնն այնքան կատարեալ կերպով չորոշուցաւ մարդուս խելքի կառավարութենից: Հողերը կարգին եւ մարմնաւոր կարգին բաժանումը Եւրոպիոյ մէջ ԺԸ դարումը միայն խկութեամբ եղաւ: Առաջին անգամն էր որ հողերը կարգը բոլորով ին մարմնաւոր կարգից առանձին դարգացաւ: Կարի ծանրակշիռ իր էր այս եւ գրեթէ կարգէ դուրս ազդեցութիւն արաւ դէպքերու ընթացքին վրայ: Ժամանակի դադափարներու վրայ, փառասիրութեան եւ անփորձութեան մի սննման կերպարանք տպաւորեց. երբէք վիճիստփայտութիւն այնքան հետամուտ չեղաւ աշխարհս վարելու, այնքան հեռու և օտար մնալով նրանից: Պէտք էր որ մի օր բանը գործք դառնար, պէտք էր որ մտաւորական շարժունէութիւնն արտաքին դէպքերու մէջ էլ մտնէր, եւ ինչպէս որ բոլորովին բաժանուած էին իրար հանդիպումն աւելի գծուար եւ հարուածն էլ աւելի բուռն եղաւ:

Ինչպէս դարմանանք հիմա այս ժամանակուայ մարդկային հանճարոյն վիճակին եւ մի ուրիշ հանքամանքին վրայ, կամենում եմ ասել նրա կարգէ դուրս համարձակութեան վրայ: Մինչև այս ժամանակ նրա ամենամեծ գործունէութիւնը պահպանուած էր միշտ մի քանի պատուարներով. մարդու մի քանի իրերու մէջ էր ապրում, որոնցից մի քանիսը նրա ակնածելի եւ պատկառելի էր երևում եւ նրա շարժունէութեան մինչև մի աստիճան արգելք էր ըլնում. ԺԸ դարումը ճշմարիտն ասելով, վարանում եմ ասելու, մարդկային հանճարոյն յարգած արտաքին իրերու որոնք լինելը, ամբողջ ընկերական վիճակն արհամարհում եւ ասում էր եւ սրանով հետեւացրուց, որ ամէն բան վերանորոգելու համար էր կոչուած ինքը եւ վերջապէս իր միտքն էլ զրաւ, որ ինքն էլ մի տեսակ արարիչ է: Կարգ, կանոն, օրէնք. սովորութիւն, կարգադրութիւն, կարծիք, միտք, բարք, վարք, ընկերութիւնն եւ մարդն ինքն անգամ նորոշեց չինել էր կարծում եւ մարդկային հանճարն էլ յանձնառու եղաւ այս ձեռնարկութիւնն անելու: Արդեօք երբէք այսպիսի մի յանդգնութիւն նրա մտքումն եկել էր:

Ահա ձեզ պարոնայք այն դրութիւնն որ ԺԸ դարու ընթացքումը ճակատ առճակատ դանդաղեցաւ խուզով իկոս ԺԴ-ի կառավարութեան մնացորդին հետ, հասկանում էք, որ անհնարին էր հարուածն տեղի չունենար այս երկու այնքան անհաւասար դրութեանց մէջ: Անդլիոյ յոռնեմար այս երկու այնքան անհաւասար դրութեանց մէջ: Անդլիոյ յեղափոխութեան զլսաւոր իրը, աղատ քննողութեան եւ բուն միապետութեան կռիւն, պէտք էր որ Ֆրանսիոյնն էլ տրաքուէր,

անշուշտ տարբերութիւնները մեծ էին եւ պէտք էին հետեւանքներու մէջն երեւային : Բայց բունը նկատելով ընդհանուր դրութիւնը նման էր բաւական չէր նոյն նշանակութիւնն ունի :

Հարկ չեմ համարում , պարոնայք , նրա անհամար հետեւանքներն այս տեղ յառաջ բերել , մեր ժողովքներին վերջին եւ մօտենում . պէտք է որ կանգ առնեմ , միայն ձեզ դեռ չթողած , կամենում եմ ձեր ուշադրութիւնը մի ամենածանր իրի վրայ դրաւել եւ ըստ ինձ , ամենից աւելի կրթականը , որնոր յայտնութեամբ է մեզ այս մեծ տեսարանի մէջ : Այս իրն է բացարձակ իշխանութեան այն անյաղթելի վտանգը , վատութիւնը եւ թէրութիւնը՝ որ եւ է բացարձակ իշխանութիւն , որ լինի , ինչ անուն որ կրում լինի իր վրայ եւ ինչ նպատակով էլ որ դործադրուում լինի : Դուք տեսաք Լուդովիկոս ԺԳ-ի կառավարութեան չորս տարիները , որ ամեն ինչ անհամար լինում էր , մարդկային հանճարը , որ ԺԹ դարու ճշմարիտ թագաւորն էր , մարդկային հանճարը միեւնոյն վիճակին ենթարկուեցաւ , ինքն էլ զրեթէ մի բացարձակ իշխանութեան տէր եղաւ , ինքն էլ իր վրայ մի չափազանց վստահութիւն ունեցաւ , իր եւանդն շատ դեղեցիկ շատ փառաւոր , շատ օգտակար էր , եւ թէ որ պէտքէ մի խօսքով ասել եւ մի վճռողական կարծիք տալ , կշտապեմ ասելու որ ԺԹ դարը ինձ պատմութեան ամենամեծ դարն է երեւում , այն դարն , որ կարելի է ասել ամենամեծ ծառայութիւններ մատուց մարդկութեան , եւ նրան ամենից շատ յառաջադիմութիւն անել , տուաւ եւ ինչ յառաջադիմութիւն , մեծ ու ազնիւ : Ես կոչուած լինելով այս տեղ նրա դատաստանը կտրելու իրեն հասարակաց պաշտօնեայ , ես իմ եղբայրացիներն ի նպատակ նրա կտամ : Բայց ճշմարիտ էլ է , որ այս ժամանակում մարդկային խելքը , բացարձակ իշխանութեան տէր դառնալով , ապականեցաւ եւ մոլորուեցաւ , եւ հաստատուած իրերն ու հին դադարներն ապօրինաւոր արհամարհանքով եւ ատելութեամբ ընդունեց ու իրան էլ մոլորութեան եւ բռնաւորութեան մէջ տարաւ . եւ այս մոլորութեան եւ բռնաւորութեան մասն էլ , որնոր մարդկային հանճարոյն յաղթութեան հետ խառնուեցաւ նոյն դարու վերջերումը , այս մասն որ այնքան մեծ էր եւ չէ կարելի կեղծել այլ պէտք է որ հռչակենք լռելու տեղ , այս մոլորութեան եւ բռնաւորութեան մասն , ասում եմ , այն մոլորութեան հետեւանքն էր որու մէջ մարդկային խելքը այս ժամանակ իր իշխանութեան ընդարձակութեան ընկաւ : Մեր ժամանակին սքարտքն եւ կարծեմ առանձին արժանաւորութիւնը կլինի ճանաչել , որ ամէն իշխանութիւն , թէ՛ մոաւորական է եղել եւ թէ՛ մարմնաւորական , թէ՛ կառավարութեանց է պատկանել կամ թէ՛ ազդերու , թէ՛ փիլիսոփայներու կամ թէ՛ պաշտօնեաներու , կամ այս կամ թէ՛ այն պատճառի համար ընդ դործադրուում , ա-

մէջ մարդկային իշխանութիւն , ասում եմ , իրա մէջ մի բնական թերութիւն , տկարութեան եւ մոլութեան մի սկզբունք ունի որ պարտական է նրա մի սահման նշանակել , վասն զի մի միայն բոլոր իրաւունքներու . բոլոր շահերու եւ բոլոր կարծիքներու ընդհանուր պատմութիւնը եւ բոլոր այս զօրութեանց ազատ յաջորարարութիւնը եւ նրանց օրինաւոր գոյակցութիւնն է , ասում եմ , որ կարող է ամէն զօրութիւն , ամէն իշխանութիւն իր օրինաւոր սահմաններում ամփոփել , ու արդեւել որ ուրիշների Վրայ չտարածուի , մի խօսքով ազատ քննողութիւնն իրօք եւ ամէնուն շահուն համար լինի : Այս է մեզ համար , պարոնայք , այն կռուին ամենամեծ դասը , որ բացուեցաւ ՔՂ դարու վերջերում , մարմնաւոր բացարձակ իշխանութեան եւ հոգեւոր բացարձակ իշխանութեան մէջ :

Ես հասայ այն վախճանին , որ իմ յառաջն էի դրել , կիշէք՝ որ նպատակս այս ուսման ընթացքն սկսելիս , ձեր յառաջը դնելն էր Եւրոպական քաղաքակրթութեան զարգացման ընդհանուր պատկերը Հռովմէական կայսրութեան ընկնելուց սկսած մինչեւ մեր օրերը : Շատ շուտով անց կացայ այս ասպարիզի վրայով , առանց կարող ընելու , մեծ մասամբ , ձեզ ստելու ինչ կարեւոր բան որ կար՝ եւ իմ բոլոր ասածներին համար էլ ապացոյցներ յառաջ բերելու : Շատ բան դանց առնել պարտաւորեցայ , շատ անգամ էլ խնդրեցի ձեզանից , որ իմ խօսքին հաւատ ընծայէք : Սակայն յոյս ունիմ , որ նպատակիս հասած ընդիմ որ էր նշանակել արդեան ընկերութեան զարգացողութեան մեծամեծ չքգունքը : Թողէք ինձ մի խօսք էլ ասեմ ձեզ , սկսելիս ջանք արի քաղաքակրթութիւնը սահմանելու , մեկնելու եւ այս անունն իր վրայ կրօղ իրողութիւնը բացատրելու : Քաղաքակրթութիւնն ինձ երեւեցաւ , որ երկու գլխաւոր իրերու մէջ է կայանում , նախ մարդկային ընկերութեան զարգացողութեան եւ բուն մարդու զարգացողութեան մէջ , մին կողմանէ քաղաքական եւ ընկերական զարգացողութեան մէջ , միւս կողմանէ ներքին , բարոյական զարգացողութեան մէջ : Այս տարի ես ընկերականութեան պատմութեան մէջ փակուեցայ , եւ քաղաքակրթութիւնը միայն իր ընկերական կողմիցն յառաջ բերի , ոչ ինչ չափացի բուն մարդու զարգացողութեան մասին : Ամենեւին չախատեցայ ձեր առաջն բերելու , կարծիքներու եւ մտքերու պատմութիւնը եւ մարդկութեան մտաւորական զարգացողութիւնը : Միտք ունիմ , երբոր եկող տարի այստեղ կդանուինք նորունց , Ֆրանսիոյ մէջ առանձին փակուելու եւ ձեզ հետ Ֆրանսիական քաղաքակրթութեան պատմութիւնը սորվելու : Պիտի աշխատիմ ձեզ , ոչ թէ միայն Ֆրանսիոյ ընկերութիւն ճանաչել տալու , այլ եւ մարդու պատմութիւնը , ձեզ հետ ականատես լինելու օրէնքներու եւ կարգերու եւ ամէն տեսակ մտաւորական կարծիքներու եւ աշխատանքներու յառաջադիմութեան եւ

այս կերպով հասկանալու ամենը միատեղ առնելով եւ ամբողջութեամբ մեր փառաւոր հայրենեաց զարգացողութեան ինչ լինելը . մեր հայրենիքը , պարտնայք՝ իրաւունք ունի ինչպէս անցելոյն այնպէս էլ ապագային մէջ , մեր ամենամեծ սիրոյն :

ՎԵՐՋ .

Թարգմանութիւն

Մարկոսի Աղաբէղեանց



ԱՂԹԻԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԱՐԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԵՂԵՂՈՒԹԵԱՆՑ ԸՆԴ ՄԷՋ ԿԱԹՈՂԻԿՈՍՍԱՅՆ

ԴԱՆԻԵԼԻՅԵԻ ԴԱԽԹԻ

Ի ՄԱՆՈՒԵԼ ՎԱՐԴԱՊԵՏԵ ԱԼԹՈՒՆԵԱՆՑ

ԿԻՒՄԻՇԻԱՆՆԵՑԻՈՑ

Շարունակութիւն.*

Յաղագս հնարիւ կաթողիկոս անուանելոյ Յովսէփ Արքեպիսկոպոսի

1800 : ՌՄԽԹ

Շիշեանց Արղըլթեան Յովսէփ արքեպիսկոպոսն՝ և առաջնորդն Հայոց, որ են ի Ռուսաստան, ըստ յառաջագոյն ասացեալ կերպիս կուռն ջանիւ հետեողըլթեամբ կողմնակալացն իւրոց, եհաս ՚ի բազում ժամանակաց բաղձացեալ փառացն, որ և զյիշեալ Յովհաննէս պատրիարքն ասպնջական գտեալ լըլթեան փափաքանացն առանց բարեհաճըլթեան Աստուծոյ :

Մայիսի 31: Քանզի նոյն մայիսի՝ յորում ինքն պատրիարք անուանեցաւ զհամահետեօլսն կամաց իւրոց ժողովեալ, թարց զլիաւոր իշխանաց հաճըլթեան մահաար կնքեցուցեալ յանուն Յովսէփ արքեպիսկոպոսի, և ինքն արդտուեալ առ տէրըլթիւն, եհան զպէրաթն և զՖերմանն վա-

*Տես Կռնկան Դ. Տարւոյն ժԱ. թուումը երես 804

սըն նորա, և առաքեալ զնոսա այսինքն զպէրաթն զՖերմանն, և զմահատնն 'ի Ռուսաստան, որ և նա 'ի Հաշտարխան քաղաք ընկալեալ՝ հանդերձ կայսերական Ղրամատան՝ որ 'ի զալ նոցա 'ի Պօլսոյ՝ ստացեալ ապա և զպարգևագիր Ղրամատան՝ կամէր զիմել գնալ յարարատ 'ի սուրբ Էջմիածին :

Բայց Յովհաննէս պատրիարզն յաղագս առաւել հարգաւորութիւն ցուցանելոյ Յովսէփ արհալոյն, ոչ սպասեալ յառաջնոց պայմանեալ զաշխարհութեան, որ ընտրեալ Կաթողիկոսացուն պարտ էր գնալ 'ի սուրբ աթոռն օծանիլ, և ապա յամենայն ուրեք 'ի սուրբ պատարագին Կաթողիկոս ազգին յիշատակել :

Նա ինքն հնարա որոնել քակել զնոյն հարկաւոր պայման, որով կարիցէր հաստատել զնա 'ի նոյն պատիւ իշխանութեան :

Յաղագս Սրբոյ Երուսաղեմի երջանկալորդ Պետրոս պատրիարդի վախճանին զինի և ընտրութեան Նորին 'ի Պօլսո :

Թէոդորոս արքեպիսկոպոսի պատրիարդութեան 1800: ՌՄԻԹ

Յաւուրսն այնոսիկ մինչ զեռ զեղերեալ վարանէր պատրիարզն Յովհաննէս պատշաճաւոր առիթս գտանել 'ի յիշեցուցանելոյ զՅովսէփ արհալոյն, յամսեանն յուլիսի հասեալ լուր 'ի Պօլսո, 'ի է Միականի մեծ Եպարքոսն Իւնուֆ. հրամայեալ է սրբոյ Երուսաղեմի Պատրիարդին գնալ առ ինքն Յեզիպոս :

Եւ երանելի Պետրոս Պատրիարզն յիշանն իւր Յոպպէ (որ է Եաֆայ) հիւանդացեալ, և 'ի սակաւ աւուր հասեալ որ վախճանին բարի մահուամբ հանգուցեալ է 'ի Քրիստոս, ազատելով ինքն 'ի տաժանելի կենցաղոյս, և մանուկն յաւուրսն այնոսիկ որք Եթովպացիք և Եպարքոսն, և զօրք բանակին յոյժ նեղէին զսուրբ աթոռն Երուսաղեմ, և զերջանիկ Պատրիարզն զայն, բայց ըստ որում զօրապետն առաւել 'ի ժամանակս պատերազմի հարկաւոր է զօրացն և հովիւն յերկիւղալի լերինսն 'ի պահպանութիւն հօտին : Վասն որոյ

առանց երկարաձգելոյ զվասնդաւոր ժամանակն զայն . զիտեղով թէ ոչինչ օգուտ է սրբոյ աթուոյն , Միաբանքն ամենայն յետ որդիսածանոյց զրոյն , միանդամայն և մահճարհաճութեան յանուն հանճարաւոր սրբազան Թէոդորոս արքեպիսկոպոսի զրեալ՝ առաքեալ էին ի Պօլիս . որպէս թէ առ Սրբազան պատրիարքն Գանիէլ ոչ զիտեղով նոցա զձախորդ զխորաւածան նորա հայցեն օր յառաջ օգնել նոցա , հաստատելով զԹէոդորոս արքեպիսկոպոսն պատրիարք սրբոյն Սաղիմայ , և օժանդակ լինել պարտուց նոցա առնելով՝ երևելի ժողով զբամոց ի Պօլիս և յայլ տեղիսն . քանզի ի բռնակալել Գաղղիացոց զԵղիպոսս մեծ նեղութիւն և վատնումն զբամոց եղեալ է սրբոյ Երուսաղեմայ բոլոր վանորէիւք . որոյ վասն ազգն Յունոց արդիւնաւոր արօք օգնեցին պատրիարգին իսրեանց , նոյնպէս և Լաթինք ի թաղաւորական դանձարանոց . վասն որոյ և մերայինք յազգէ մերմէ խնդրէին :

Ի հասանիլ զրութեանցն ի Պօլիս ամենաւն յուլիսի , յիշեալ պատրիարքն Յովհաննէս պարապ դտեալ ջերմեանդութիւն ցուցանելով պարզամիտ ժողովւոյն , ժողովեալ զամանա անձինս ընթերցեալ զգրութիւնսն , ի նոյն օր հաստատուիք ի վերայ յիշեալ սրբազան Թէոդորոս արքեպիսկոպոսի զպատրիարքութիւն սրբոյ Երուսաղեմի , յօժարեցուցեալ զմանա օգնել արօք և պարտուցն , որ զկնի ժողովեալք ետուն ըստ կարեաց յաղաղս բարեպաշտական ջերմեանդութեանցն , որոց զմեծ մասն յիշեալ Յովհաննէս պատրիարքն , վասն իւր սահաթի Բարդուղիմէոսի արարեալ պարտուցն օժանդակելոյց :

Նա և ի պատճառս նորոգ ընտրեցեալ պատրիարգին որոյ անունն ըստ նախնական սահմանի պարտ էր յիշատակիլ բաղձանացն լրութեան պատճառ գտեալ , հրամայեաց զերկոսեանն ի միասին . այսինքն զՅովսէփ արհին առանց օճութեան կաթողիկոս , և զսրբազան Թէոդորոս արքեպիսկոպոսն պատրիարք Սաղիմայ յիշատակել յաւուր նաւակատեաց շաբաթու պայծառակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի : Թուլիսի 14»

Սակայն յիշեալ սրբազան Թէոդորոս պատրիարքն յա-

դադս րազում զանազան պատճառաց խոհանութեամբ իւրով, յանուանակոչութենէ իւրմէ, մերձ մինչև յերկու տարի յայտնադէս ոչ էառ յանձն զպատիւ պատրիարքութեան, ոչ յաթոռն կացեալ ի մէջ սրբոյ Եկեղեցոյն, և ոչ զանուանիդ յիշեցուցեալ և քանիցս ի Պօլիս գիր հրաժարանաց գրեալ զայլ ոք կացուցանել:

Քանզի այր խոհանութիւն իւն ժամանակին ներկայ անսանէր որ վէզիրն մեծ բանակաւ կայր յԵգիպտոս, և ի Պօլիս եղեալ պատրիարկի զԼարչն ի մանկութենէ գիտէր, և թէ կատարեալ անձինք որպէս վարելոց են ընդ նմա խելամուտ էր:

Ուստի յաւուրս պատրիարքութեան Խամսեյի ճգնակիր Գրիգոր արքեպիսկոպոսի ապա էառ յանձն նստիլ յաթոռ իւր և իրրև վերստին յիշեալ Յովհաննէս պատրիարքն վերադարձաւ ի Պօլիս ի պատրիարքութիւն գրէ նորին սրբազնութեան Թէոդորոս պատրիարքն առ սրբազանեփրեմարքեպիսկոպոսն ի սուրբ Երուսաղեմս ի 1805 յապրիլի 15 այսպէս: «Այլ արդ զմեծին Պօլսոյ Գրիգոր պատրիարք զեղբօրէ մերմէ ի մօտ աւուրքս լուաք ելեալ ի Պօլսոյ ընդԴանիէլ սրբազանեպիսկոպոսին գնացեալք յէջ իմածին սուրբաթոռն, բայց զկերպ գնալոյն նոցա և զպատճառն չգիտեմ, և այժմ ի Պօլիս նախկին պատրիարք Յովհաննէս արքեպիսկոպոսն վարէ զիշխանութիւն պատրիարքութեան, բայց և մերս կրելութեան կարողութիւն իրեք ոչ փնաց, թող զառաջինսն, զի արգէնն յաւել քան զայն, որ բզեշխն մերոյ արգելեալ յՆաֆա ծովեկեր կոչեցեալն, յերկիւղէ յԱքեա բնակեալ ձէզար փաշա կոչեցելոյն, յորմէ պաշարեալ յինն ամսեայ ժամանակս բազում զօրօք, և ի նոյն աւուրսն թէ որքան եղկելութիւնք նեղութեանց անտարեւրք հասին առ մեզ, զսոփն սաստիկ հասարակաց մինչև ուտել զսերֆն բամպակի ընդ արեանց անասնոց, և ընդ կղկզանց նոցին շաղեալ այս փոխանակ հացի, և զմիս ձիոց ջրուոց և աւանակաց: զորոց յեփեշն զշինուածս փայտակերտից փլուցեալ և այրեալք: Զդանս քանիցս անդամ Յունաց և մեր ըռէիզից և անդ գնացելոց կարդաւորաց և միաբանից որոց զինի ամենայնի նախատանաց բանտից և այլոց տանջանարա-

նաց յաւել ևս առնուլ զերկերիւր քսակս յիւրաքանչիւրոցն
ուրոյնաբար և այլ աւելի : ԱՅ դառնակիւծ աղետիցս, յին-
քեանս դրամ՝ ոչ երբէք ի քաղաքիցսն ոչ բնաւ , արտաքուստ
մտաննէն անհնարին , և ի ներքս ամենեւին զուրկ , յերկնից
ոչ իջանէ , և զետնոյ ոչ բուսանի , տանջանքն տաստիկ , հար-
կանումն ևս առաւել , փախուստ ոչ լինի , և համբերել չտա-
նի , զմահ որոնեալ ոչ զտաննն , և ազատութեան ոչ հասա-
նին : Ապա զինչ անողորմ այն կուսակալ , առէք ասէ ի զօ-
րաց իմնց քղրամս ի վարձու և տուք ինձ : Վասն որոյ և
նոցա յանհնարին վարանեալ առնուն ի զօրաց անտի ձե-
ռագրով զտանն խուռուշ հինգ խուռուշ շահով (ոչ եթէ
մինչև ի լըումն տարոյն , այլ մինչ ցրանալ դրանց քաղաքին)
և տան երկրորդին փարաւօնի՝ դազանացելոյ յսկեալ անցեալ
ապրիլի 18-էն մինչև յերկուսն փետրվարի վարէին այսու կեր-
պիւ և ի լըումն ժամանակին փախեաւ անփրաւն դէպ ի ծով
հանդերձ իւրայնովքն , բացաւ դուռն Նաֆայի և մօրին զօր-
քըն արտաքին , և ելին զօրքն ներքին , և խնդրեալ զլըամսըն
առնուին ի մէջ : Նւ այլ այսպիսի աղետալիք բազումք որ-
քանացեալ են և ի վերայ այնմ սուրբ աթոռոյն :

Որպիտաբար ի Պօլսոյ ելանէն Դաւիթ եպիսկոպոսի ևս գնալոյն ի
Սուրբ Եջմիածին և ի իլլախ լինին սրբազանին :

Ի նոյն մայիսի (9 էն) մինչի յօգոստոսի 2 Յովհաննէս
պատրիարքն յոյժ վարանէր ի միտս՝ վասն Դաւիթ եպիսկոպոսի
թէ զորով կերպիւ հանցէ զնա ի Պօլսոյ առ ի միամտութիւն
իւր ինքեան :

Նմին իրի ըստ բնական դարանակալ բարուցն խորա-
մանկութեամբ քաղցրացուցեալ զքինն նորա , պէրաթ և Ֆէր-
մանաւ գնալ ի սուրբ աթոռն , սպասել զալստեան Յով-
սէփ արհւոյն , եթէ նա ողջամբ հասցէ անդ և օծանիցի ,
զինքն զԴաւիթ եպիսկոպոսն կամ Պօլսոյ , և կամ զմիւս-
նոյ նուիրակ առաքել խնշրեացէ պատրիարքն , իսկ եթէ ոչ
կարացէ հասանիլ ի սուրբ աթոռն Յովսէփ արհւոյն , նոյն
Դաւիթ եպիսկոպոս անդանօր ներկայ գտեալ ընկալցի զկաթու-

զիկոսութիւն , ունելով ի մօի յայնքան ժամանակս թողուլ զորբազանն Գանիէլ յաքսորս ի Պօհճատայն , մինչև խորհեցեալ բաղձանաց դռնէ մինն զլրումն առցէ : Վասն որոյ յաւուրս պատրիարդութեան իւրոյ մինչև յգեկտեմբերի 15 և ոչ մատնաչափ զիր օղջունի կամ յու սաղրութեան զրեաց առ օրբազնութիւն նորա :

Եւ յիշեալ Գաւիթ եպիսկոպոսն , զմասն բարերարութեան օրբազանին՝ յաւատուութեամբ Յովհաննէս պատրիարդին , ի Պօլիս մեռացմամբ առեալ զպերաթ Ֆէրման Յովսէփ արհւեստ , աճապարեալ եհառ ի սուրբ ամուսն . ոչ ինչ հոգալով գոնէ զաղատութենէ օրբազանին . որ ի պատճառս իւր յայլոց միաբանից , անուամբն Աստուծոյ զրեցեալ գրութեանցն հեռեալ երանելին՝ տարապարտուց անկեալ ի պատրիարդութենէն յաքսորս առաքելաւ :

Քանզի եթէ ստէպ ստէպ աղերսական թախանձանօք և երդմնահարութեամբ լցեալ մահալարք և այլ զրութիւնք . և մշտնջենաւոր յորդորմունք յիշեալ եպիսկոպոսի , և Գալուստ եպիսկոպոսի անզուշ արարմունք ոչ լինէին , օրբազանն ոչ երբէք թողոյր ի բաց զպատրիարդութիւն Պօլսոյ և ոչ չարեացն երբէք պատահէր :

Եւ յաւիտեան Յովհաննէս եպիսկոպոսի պատրիարդութիւնն ոչ հասանէր , զի կարասցէ խտտութեամբ վարիլ ընդ այնպիսոյ զերապտաիւ առն Աստուծոյ , մինչ զի ի խնդրել յարգելի ամիրայից ի Պօլիս , զրել զեթլաին աղատութեան , ելանել ի կղզոյն ուր ոչ ոք յազգէ մերմէ և ոչ եկեղեցի կայ , զնալ աղատութեամբ յայլ տեղի ի մէջ ազգի մերոյ , և պաշտել ըստ կրօնի իւրոյ , ի մէջ սուրբ եկեղեցւոյ զսուրբ հաւատն ծառայիւք , և պաշտօնէիւք իւրովք :

Առ այս մարդասիրական խնդիր յարգելի ամիրայից , Յովհաննէս պատրիարդն տասնեհինգ հազար խառուշ ծախս խնդրեաց ի կատարել վասն որոյ ի տեսանել զերսպտաիւ իշխանաց զանդթութիւն Յովհաննէս պատրիարդին , զայրացեալք ի նմանէ , ինքեանք օրտի մտօք հեռեալ անկախ պատրիարդական յիշխանութենէ հանին յարքունի զրանէն զեթլաին այսու թէնութեամբ , զնալ աղատ ի Պանտմոյ մնալ

ըստ կամաց իւրոց , և յիրք զհաշիւն իւր աւարտեացէ ի Պօլսոյ ապա զնսացէ ի կողմն հայրենեացն որ է Պանաղիա կամ սուրբ Էջմիածին :

Եհաս և յաւուրսն այնոսիկ այլ իմն լուր կատարեալ , ուրախութեան թէ սուրբ կողմաւ իս Գեղարթն Քրիստոսի Աստուծոյ մերոյ ի Թիֆլիզ քաղաք որպէս պատանդ պահեալ արքայն Վրաց , և այլ համախոհք Յովսէփ արքեպիսկոպոսի :

Կենդանի նահատակ առձայնեալ Ակնցի Յովհաննէս արքեպիսկոպոսն մեծ հնարադիտութեամբ փախուցեալ անտի , բերեալ է ի սուրբ աթոռն բազում անձկութեամբ , (յորմէ այժմ նոյն արիաջան եպիսկոպոսն և Գեղարթակիր վերակոչի) :

Այսու աւետօք առաւել ևս զուարճացեալ սիրտ սրբազանին օրհնելով զազգն . և զբարեպաշտ իշխանն . և զովն լով զկորովի քաջութիւն Գեղարթակիր արքեպիսկոպոսի

Միտ. 26: Ազատեալք յաքսորանաց Սեպտեմբեր ամսոյ մտեալ ի նաւ սրբազանն երէք սպասաւորօք , նախ զնացաք ի Թրակիայ այն է Թէքիրտալը յաւուր տօնի վարագայ սրբոյ խաչին ուխտ և յերկրպագութիւն անդ եղեալ հռչակաւոր սուրբ բեւեռին Քրիստոսի , որ է ի սուրբ Թագաւոր ասացեալ վանքն , ամենեքեան անդ մեծաւ ջերմեռանդութեամբ կատարեալք զուխտ և զփափագ սրտից մերոց , փառս և զղուհութիւնս մատուցաք Աստուծոյ խնամակալ բարերարին մերոյ :

Որ միւսանդամ արժանի արար զմեզ տեսնել զսուրբ տաճար իւր և զազգ մեր : Քանզի զհրաշափառ Համբարձումն Քրիստոսի , զշնորհաձիր Գալուստ սրբոյ հոգւոյն , զՊայծառակերպութիւն Տեառն . զփառաւոր Վերափոխում Տիրաֆօրն , և զխաչ վերացն փրկչին , առանց եկեղեցւոյ և պաշտօն պատարադի ի մէջ այլասեւից ի Տննեղոս կողմն , հանդէպ Տրօադայի ցաւօք և հեծութեամբ անցուցեալ էաք զաւուրսն զայնոսիկ ի պատճառս Յովհաննէս պատրիարկի անդթութեան :

Անտի դարձեալ ելեալք ի նաւ կամէաք զլմեկ ի սահ-

մանկալ տեղին մեր ի Պանորմայ. բայց ի Մառմառայ աչքդի
ասացիալ անարդ տեղին, պատահեցաք ըստ գանկատոյ սրբա-
զան առաքելոյն, և լակիկլոն հոլմոյն, և ալիքն ի բռնու-
թենէ հոլմոյն բարձրացուցանէին զնաւն յերկինս, և նոյն
հետոյն իջուցանէին յանդունդս, մինչև նաւալարաց ի դո-
ղանի հարեալք ողբային զկորուստ իւրեանց:

Եւ տեսալ մեր զանակնունելի զփրկութիւն մեր խոստա-
ցաք նաւալարաց տալ լրապէս զվարձս նաւոյն՝ եթէ հանցէ
զմեզ յերկիր կամ ի կղզի ինչ որո դարձուցեալք զգլուխնաւին,
արկեալք առաջն հոլմոյն հազիւ երբէք անկաք (իշերէկ) ա-
սացեալ փոքրիկ գիւղ մի, յորում տեղուջ համարեցաք վեր-
ըստին ծնեալս զմեզ, և լրումն էառ Առաքելականն բան վիշ-
տըս ի ծովու, վիշտս ի ցամաքի, վիշտս ի բարեկամաց, և վիշ-
տըս ի սուտ եղբարց. բայց փրկէ զմեզ Աստուած յայնմանէ
և եղեալ մեր անդ յաւուրս երկու սակս սասաիկ անձրեոյ
և ձեան, յետորոյ ցտմաքային ճանապարհաւ գրաստիւք զը-
նացաք ի Պանորմայ: Հոկտեմբերի 5:

Ի սոյն Հոկտեմբերի 10 իմեջ սուրբ Էջմիածնի բազմաշ-
խատ զխանական ծերունի Մինաս արքեպիսկոպոս և ծայ-
րագոյն նուիրալն Կոստանդնուպօլսոյ և երբեմն Հաշտարխա-
նու, վախճանեալ և բարձեալ ի սրբոյ աթոռոյն, ըստ Մովսէսի
Խորենացոյն այր իմաստուն, խորհրդական, և հանձարեղն,
և մնացեալ ամենեցուն, որպէս նաւ առանց ղեկաւարի և
որպէս ոչխոր առանց հովուի, ուստի յետ սակաւ աւուրց
մեծամեծ անակնունելի փորձութեանց պատահեալք ամենոյն
աթոռայնովք, և համբաւ յաշխարհ տարածեցաւ, զոր
ի տեղուջ իւրում գրեցուք և յետ ինչ աւուրց առաքեաց
սրբազանն զհարազատ սղասաւոր իւր ըզսարկաւագ տիրացու
Պաղասարն օրհնութեան և շնորհակալութեան գրովք
ի Պօլիս առ բարերարն, և առ ծանօթսն. ըստ հրա-
մանի ահրութեան տեսանել զհաշիւսն, և առաքել
զինչսն:

Իսկ Յովհաննէս պատրիարդ զհաճոյական անձինս տար-
եալ ի վերայ ընչեցն, զախօրժելինն առ ինքն արգիլեալ. և
զայլն յանձնեալ տիրացու Պաղտատարին: Նո և առաջ-

նորդական կոնդակ մի ընդ նմա ի վերոյ Եւդոկիեայ քաղաքի, իբր զնալ սրբազանին անդ որպէս սպասաւոր իւր լինիլ առաջնորդ տեղւոյն :

Որ և յիշեալ տիրացու Պաղտասարն, մնացեալ ընչիւք և կոնդական եկեալ ի Պանտրմայ Նոյեմբերի ամսոյ 4 :

Եւ ի նոյն աւուրսն ձուլայեցի Գալուստ նուիրակն որ եղև պտաճառ այսոցիկ խռովութեանց, և ինքն փոխանակ պատրիարգ լինելոյ, ի շնորհս Յովհաննէս վարդապետի գնաց յիլիմեայ աքսորս եհան պտորիարգն զԹլախն գնալ ի կողմն Նիկիմիդեայ և լրացուցանել զԹերի թողեալ գործն նուիրակութեան ժողովելով պարզամիտ ժողովուրդոց զկաթն, զիւղն, զքանիր, և զսարն, վասն հարկաւորութեան յիշեալ պատրիարգին :

Նոյ. 13 : Իսկ սրբազանն ելեալ ի Պանտրմայէ զինի հասանելոյ ընչին, գնացաք ի Մահալլա՝ ասացեալ տեղին, առ ի գնալ ի Թոխաթ : Եւ երկրացիք յաղագս բարեպաշտութեան և մարդասիրութեան իւրեանց, ի քանի աւուրս հանգստանալ անդ և ապա գնալ յոյժ աղերսանօք խնդրեցին :

Այս քանի օրինակն մարդասիրութիւն ողորմելի Մահալլաքեցոց կիրք եղեալ պատրիարգին Պօլսոյ. նորոգ հնարիւ արքունի հրովարտակաւ և վերակացուաւ առաքել տնայլով, ծանուցեալ առ Թամարով գեսպանն միջնորդութեամբ Գէորդ Աղանկովի, թէ Դանիէլ պատրիարգն նստեալ ի Մահալլա՝ կամի կրկին առ ինքն դարձուցանել զկաթուղիկոսութիւն սրբոյ Էջմիածնի, խնդրեմ ծանուցանել տերութեան, և փութապէս առաքել ի Թոխաթ զի մի խռովութիւն եղեցի ի մէջ մայրաքաղաքիս :

Զայս բան ծանուցանեալ գեսպանն ի դուռն տերութեան և նրբալնին Ըւէլիզ Չէլէպի Էֆէնտին, կոչեալ առանձին զերեւելի իշխանս մեր և զգերապատիւ Սուրենեան յարգելի Մուրատ Ամիրայն հարցեալ ծանօթացաւ ի նոցանէ, թէ ըստ ամենայնի սուտ և զարանակալութիւն Յովհաննէս պատրիարգի է այն :

Նորին զերազանցութիւն խորհուրդ տուեալ նոցա, զրել առ սրբազանն, ըստ հաճութեան իւրոյ հանդարտ ըն-

Թացիւք ելանել և դնալ ի Թօխաթ , մինչև Յովհաննէս պատրիարդն դառհաւտարչայն ընկալցի :

Եւ տախալին եռանդ սրաի Յովհաննէս պատրիարդին ոչ զիջեալ , քանի երեւելի տնձանց կնքով գիր մի ձեռամբ Վարդան ժամկոչի առաքեալ այսգիսի գրութեամբ , և տերութիւնն բարձր հրամանաւ առաքել կամեցեալ էր զսրբազնութիւն քո : Բայց մէք աղերսանօք արդեւեցաք . և յայտնեմք քոմդ մեծութեան զնալ փութով այտի ի Թօխաթ , կամ յալ ինչ տեղի ըստ հաճութեանդ զի մի՛ կրկին անպատուութիւն վերաբերեցի սրբազնութեան քո ։

Ի տեսանել սրբազանին զդառնութիւն մաղձի Յովհաննէս պատրիարդի . Գեկ . 64 : գրութեամբ և կնքով իւրով ելեալ ի Մահալաճէ գիմեաց զնալ 1801 : ՌՄԾ Յունով . 5 յեւդոկիայ : Հետեւեալ թուականութեան հասեալ ի Պօլս և կատարեալ անդ գտօն Ծննդեան և Յայանութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի , զբարեկենդան առաջաւորացն ի Թօսեայ . 19 Յունվարի զնացաք Յամասիայ , և ի 22 նոյն ամսոյ ժամանեցաք ի Թօխաթ :

Ընդ յառաջ ելեալ բազմութիւն մերազանց մեծաւ պատուով ընկալեալ տարեալք նախ ի վանս սրբոյ Աննայի , և յիտ խրախալից ցնծութեանց յերկրորդում առուր փառաւոր հանդիսիւ քահանայք : Իշխանք , ընդ որս էր Մաշեկերացի մահաթի Գասպար օրթախ և խնամի Ալփիարեան Փիլիպպոս սառաֆի , և ժողովուրդ բազում . ձիաւորեալք ամենեքեան ածեալ մօտին այնու փառաւորութեամբ ի թաշմէրտիլէն սուրբ Ստեփաննոսի եկեղեցին :

Բայց ըստ ամենայի զխորհուրդ իւր հաստատեալ սպասէր ժամանելոյ Յովսէփ արհույն ի սուրբ աթոռն , օծութեամբ լըացուցանել զպաճիւ անուանակոչեալ Կաթողիկոս սուրբեան իւրոյ . և զինի սրբազնութիւն իւր . ելեալ ի Թօխաթու երթիցէր ի սուրբ աթոռն , ըստ բնածին բազանայն իւրոյ կալ և մնալ հասարակ միտքանական պաշտօնիւ ի մէջ լուսակառոյց սրբոյ աթոռոյն : Վասն սրոյ ոչ երբէք էառ յանձն զանուն առաջնորդութեան Թօխաթ քաղաքին : Յունվարի 25-էն մինչև յապրիլի 11 որքան եկացն անդ ըստ ա-

մենայնի որպէս պանդուխտ , և ոչ որպէս առաջնորդ նոցա :

Յաղագս ի Ռուսաստանու եղանկոյ Յովսէփ արքեպիսկոպոսի , և ի Թիֆլիզ վախճանելոյն , և անպատեհ արարմանց ձեռնառուն սպառաւորին իւր Աղբիւրմանցի Ժրիգոր վարդապետի :

Որդին Շիօշի Արղուծեանց անուանեալ Յովսէփ արքեպիսկոպոսն , ի մէջ հզօր տէրութեան Ռուսոյ քսան և եօթն տարի սրբոյ Էջմիածնի անուամբն նուիրակ , և միանգամայն առաջնորդ կացեալ , և ունէր առ ինքն ձեռնասուռն սպասաւոր մի Աղբիւրմանցի Գրիգոր վարդապետ : Չորոց յատուկ անձանց և Ռուսաստանու Ժողովրդոց վերաբերելի ամենայն կերպ կառավարութեանցն վարուց , բարուց , և կրօնից ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ լիակատար պատմութիւն յառաջագոյն գրեալ է ի Սանկդ Պետերբուրգ տասն և հինգ ամեայ ժամանակաւ բնակեալ բարձր կալէկի այսինքն զատուրանի նոցին թարգման , ըստ Հայրենւոյն Երևանցի , ըստ Ծննդեանն և անդեանն Զմիւռնեցի աղայ Մարգար Զաքարեայն Խոճեանց , այր բանիբուն և զերիմաստ ի Հայս հեղինակ թարգմանութեան իմաստալի Տելամազ անուանեալ մատենիին , և յօրինօղ զանազան հարկաւոր գրքոց որք տալաւ ին յազգ մեր նոքա , ոչ են տարածեալք :

Որոյ ի լիակատար պատմութենէն ցանկացողք ունին ծանօթանալ սոցին զեարդից վասն որոյ ոչ պատշաճ համարիմ աստանօր յիշել ինչ զնոցանէ , զի մի՛ առեւթիւն , կամ կողմնապահութիւն ումեք երևեսցի ի պարզ պատմութեանս այսմիկ : Այլ առաջիկայ գործառնութեանս զպատկանեալսն աստանօր յիշատակեցից թէ նոքա սրբան գոյից լիութեամբ ի Ռուսաստանու ելեալք : Եւ զկնի ի Թիֆլիզ վախճանելոյ տեառն Յովսէփայ հարազատ սպասաւորն իւր Գրիգոր վարդապետ զօրութեամբ այն ամենայն գոյից զինչ ի՞նչ փնտս վերաբերեաց բարեկարգութեան սուրբ եկեղեցւոյ , սրբոյ Էջմիածնի , և բոլոր ազգի մերոյ :

Յիշեալ առաջնորդն Հայոցն Ռուսաստանու Յովսէփ արքեպիսկոպոս , նստեալ յաւուրս բազում ի մէջ Կայսերաբնակ

Մանկդ Պետրբուրգ քաղաքի սպասէր տնօրէնութեան Թաւ
մարով ղեկավարին ի Պօլտոյ, և ի լսել իւրում թէ ընտրու-
թիւն ազգին վասն սրբազանին Դանիէլ յետ անկեալ զԳա-
նիէլ պատրիարքն՝ փոխանակ ի Կաթողիկոսութիւն առա-
քելոյ զօրութեամբ գետպանին յիշեալ պատրիարքն, և Գա-
լուստ նուիրակն առաքեցան յաքսորս և Յովհաննէս եպիս-
կոպոսն անուանեալ պատրիարք, ջանոյ զԿաթողիկոսական
պէրաթ և Ֆէրմանն ի վերայ անուան նորին հանել ի դրա-
նէ տէրութեան Օսմանցւոց, և յազդէն մահաւոր հաճու-
թեան առաքել առ ինքն:

Ուրախութեամբ սրաի ելեալ ի Պետրբուրգու գնացեալ
ի Մօսկօ՛Ֆ առաջին թաղաւորանիստ քաղաք, սպասեալ ժա-
մանելոյ յիշեալ հրովարտակայ և մահաւորին:

Եւ լուեալ անդ թէ այն գրութիւնք ի Հաժտարխան
ուռին ժամանել առ ինքն, դիմեալ անդ կայիւքն իւրովք,
և ժողովեալ յամենայն վիճակէ իւրմէ նոր ողորմութիւն յա-
նուն սրբոյ աթոռոյն, հանդերձ 27 ամեայ լի յառատ ար-
դեամբ նուիրակականի և առաջնորդականի, և ի Հնդկաց
ստացեալ երեւելի դումարիւքն, պատրաստեալ զբեռինսն,
ընկալեալ յաւուրսն այնոսիկ և ի Պօլտոյ զպէրաթ զՖէրման,
և զշնորհաւորութեան մահաւոր յազդէն:

Ապա առաքեալ գնոսա ի Պետրբուրգ առ զործակա-
տարսն իւր յայտնել Մեծի Կայսերն, առաջին Պալլ Պետ-
րովիչին, և ընկալնուլ ի Նորին Մեծութենէ ողորմութեան
Ղրամատ որ է պէրաթ, որ և գնա յետ յաւուրց ինչ ստա-
ցեալ 1800. ՌԲԽԹ Դեկ. 12. ելեալ ի Հաժտարխանու ամե-
նայն լըութեամբ գործոյն, թողեալ ի տեղի իւր նուիրակ և
միանգամայն առաջնորդ ի միարանից ըստ սրբազանին Դա-
նիէլի ի Կաթողիկոսութիւն ընտրեցեալ առաքելաշաւիղ Ե-
փրէմ արքեպիսկոպոսն կոնդակաւ իւրով և բերանով այլոց
ասացեալ է որպէս թէ զյիշեալ Գրիգոր վարդապետն եպիս-
կոպոս ձեռնադրեալ առաքելոց է առաջնորդ և սրբազանն Եփ-
րէմ կատարեալ զնուիրակութիւն պարաի դառնալ ի
սուրբ աթոռն: Զայս ասացեալս իմ հաւատե է ի Յովսէփ
արհաւոյ 1800: Դեկ. 12 յանուն սրբազան Եփրէմ արքե-

պիսիրպոսի գրեցեալ կոնդակն առաջնորդութեան, և վասն
Գրիգորին ոչ գրութիւն, այլ աւանդութեամբ հռչակ իւ-
րայնոյն, թէ կամէր զԳրիգորն առաքել ի առաջնորդութիւնէ
1801. ՌՄԾ ի սոյն Գեղեմեմբերի 18. զիմնական թաղէոս
վարդապետն Պօլսեցի որ աշակերտաց Զաքարայ Պատրիարքին
էր, և ի 1787-ին եկեալ առ Յովսէփ արհն մնացեալ ըստ
հովանեաւ նորա մինչև ցոյնօր, և յաւուրսն այնոսիկ ի Հաժ-
տարխան հիւանդացեալ բարի մահուամբ ի տէր հանդու-
ցեալ որոյ զհոգին տէր լուսաւորեսցէ. և ըստ սրբոց վարդա-
պետացն դասեսցէ :

Եւ յետ ելանելոյն նորա ի Հաժտարխանու, հասեալ
ի Հայրենի երկիր իւր ի Թիֆլիզ փետ. 11. իջևանեալ ի տան
եղբօր որդոյ իւրոյ Արղութեանց Սօլօմօնի սպասաւորօք և
բնումբքն իւրովք :

Ի մեծաբանս իւր ընդ յառաջ եկեալք անդանօր ի սր-
բոյ աթոռոյն աթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոս, քաջ
քարտուղտր թողէոս արքեպիսկոպոս, Բարսէղ արքեպիս-
կոպոս, որ ի Պօլս երկիցս տէրութեան ծանուցաւ անուն
նորա ի շարս Կաթուղեկոսութեան արժանաւոր անձանց և
գրագիր Անդրէաս արքեպիսկոպոս, այս չորեսին առաջին և
երեսել արքեպիսկոպոսունք ի դիմաց բոլոր միաբանից զրովք
և վայելչական ընծայիւք հասեալք ի Թիֆլիզ. և եկեալ նո-
րա ի տան եղբօր որդւոյ իւրոյ իջևանեալ առ որ ապա
մատուցեալ զխոնարհական գրութիւն միաբանից և զընծայն,
կամէին օր յառաջ զիմել ի սուրբ աթոռն հանդերձ նովա :

Բայց նա ունելով սակաւ ինչ հիւանդութիւն, սպա-
սէին առողջութեան, կոցեալ ինքեանք յայլում տեղւոջ հե-
ռի ի բնակութենէ նորին :

Որոյ հիւանդութեան ներդործութիւն աւուրց յա-
ւուրս զօրացեալ մինչև ճարտար բժշկաց հնարադիտութիւնք
առ այն տկարացեալք, և զեղորէիցն զօրութիւնք առանց
օժանդակութեան գտեալք : Ուստի կոչեալ առ ինքն ի սրբոյ
աթոռոյն եկեալ զաթոռակալ Սիմէօն արքեպիսկոպոսն, խոս-
տովանեալ նմա զլէտին խոստովանութիւն ըստ աւանդու-
թեան սրբոյ եկեղեցւոյ, և ոչ ունելով զօրութիւն գրագրու-

թեան, և ոչ ժամանակ այլոց գրեցուցանելոյ բերանով կտակ որարեալ առաջին խոստովանահօրն իւրոյ, և նա զկնի ի զիր արձանացուցեալ զնոյն ժամու կտակն Յովսէփ արքեպիսկոպոսի ի վերայ երկու թղթի որոց մէկն ի սուրբ աթոռն առաքեալք, և զերկրորդն ի Ռուսաստան առ սրբաշան Եփրեմ արքեպիսկոպոսն, և օրինակ զրոյն է այս:

Երանելի կաթարարութիւն Յովսէփ Կաթողիկոսին ինձ Սիմէօն Եպիսկոպոսիս որ խոստովանահայր եղէ նմա ի Թիֆլիզ քաղաքիս.

« Յովսէփ կոչմամբ Կաթողիկոսն ի Թիֆլիզ քաղաքոջս մինչ պատրաստեցաւ և զբռնինսն կապել ետ՝ զնալ ի սուրբ աթոռն, հիւանդացաւ սաստկապէս, և ի Մարտի ամսոյ ինչ ներբորդ օրն յառաւօտոյն, յետ խոստովանութեան և հաղորդութեան, յորժամ հարցի թէ զինչ ունիս հրամայել վստն քո և իրաց քոց, նա յառաջն պատուիրեալ զոլով վստն բռնանցն ասաց, յուղարկեալ ես. պատասխանեցի թէ ահա յուղակեմ և նա կրկին ստիպեաց թէ շուտով յուղարկեալ և մի յետաձգեր որ հոգիս պարտական չմնայ աթոռոյն:

« Ապա ասաց թէ մէկ փոքր զուլթի ունիմ հարկաւոր իրաց ի մէջն կայ յատկացեալ ինչ, զայն առանձնաբար քո ձեռամբն տա՛ս Սոլօմօնին, որ օտարք չիմանան և իմ հայրենի տունն չքակեն, իսկ այլ ամենայն կայքն իմ սուրբ աթոռոյն են:

« Երկրորդ ասաց թէ ի Գրիգոր վարդապետէն զրտմ եմ փոխառեալ, թանխէն աւելորդօք մօտն ունիմ: Երկրորդ ասաց թէ ի մեր Աւետիք վարդապետէն քանի հարիւր օսկի փոխ եմ առեալ պիտի հատուցանէք ի կայիցս որպէս յայտնի է:

« Դարձեալ յուր ժամուն կոչեաց, որ լեզուն ևս ծանրացեալ էր, ասաց ես կմեռանիմ. իմ մարմինն տարէք ի սուրբ Եջմիածին Սիմէօն Կաթողիկոսի գերեզմանի մօտն թաղէք, և իմ կայից զաւթաբովն Գրիգոր վարդապետն գիտակ է, ինմանէ անդեկացէք ամենայն հետապ և որպիսոլթիւնն:

Այսքան ինչէ կտակն որ խօսեցաւ ընդ իս և ես ճշմարտութեամբ գրեցի ի Թղթիս Սիմէօն եպիսկոպոս , միաբան և գործակալ

Սուրբ Էջմիածնի :

կնիք

Ի 1801 Մարտի 12

Յետ այսորիկ կտակարարութեան ի դիշերին յորում լուսանայր տաներորդն մարտի , և էր նաւորուզն պարսից այսինքն տարեմուտ, ըստ սրբազան առաքելոյն Քրիստոսի յորմէ հետէ դադանիքն աստուծոյ ի հրեշտակայ ևս անդիտելիք են , աւանդեալ զհոգին իւր . 1801 . ՌՄԾ մարտի 10 . ի տան եղբօր որդւոյն իւրոյ Սօլօմօնի Յովսէփ արքեպիսկոպոսն , ոչ ժամանեալ ի բազում ամաց հետէ բաղձացելոյն , և բռնութեամբ յափշտակեալ պատուոյն :

Իսկ անբարեսէր սպասաւորներն յիշեալ Քրիզոր վարդապետն , փոխանակ վայելչական մարդկութեամբ վարելոյ ընդ գերապատիւ արքեպիսկոպոսունն սրբոյ աթոռոյն , և միանալոյ ընդ եղբայրական կապակցութիւն նոցա , նենդութեամբ վարեալ զմարմին օգորմելի հանդուցելոյն ոչ ընդ օրինի հայաստանեացս սուրբ եկեղեցոյ թաղման արժանացեալ այլ կտաւով պատեցուցեալ և իմէջ պահարանի ամիսիկեալ եղեալք ի Մողնոյ եկեղեցին ի պահեստ , զի զկնի առաքեսցէ ըզդ կտակին ի սուրբ աթոռն : Որոյ հարազատութիւն թաղմանն եղև , և ոչ այլ հարկաւոր հրամանացն : Քանզի զօրութեամբ ընդ ձեռամբ իւր եղեալ երևելի մեծ գոյին ստացեալ զբաղաբական կառաւարիչն Թիլֆիկ քաղաքի և զԴաւիթ արքայ որդին Վորիկ խանի . որպէս վկայէ իսկ ձեռագիր նոյն Դաւիթ Յարեհիչ արքայ որդւոյն վրաց : Եւ յեկրորդումն աւուր ի մէջ Թիլֆիկու հաշակ հարեալք , թէ Յովսէփ արքեպիսկոպոսն զՔրիզոր վարդապետն հոգաբարձու կարգեալ է բոլոր գոյիցն , և կտակեալ է կամ Կոստանդնուպօլսոյ Յովհաննէս պատրիարքն , և կամ Պօլսոյ վերադարձեալ զԹիլիզեցի Դաւիթ եպիսկոպոսն յաջորդ կացուցանել ի տեղի իւր կա-

Թուղիկոս, որպէս և առ այս վկայէ ի նոյն Գրիգոր վարդապետէ առ մեծ կուսակալն Վրաստանու Ռուսեան տէրութեան հրամանաւ կտրկեալ Քնէազ Կնօրինկն նոյն մարտի 11 զրեցեալ զիրն: Եւ հրամանաւ քաղաքապետաց և կառաւարչացն Թիֆլիզու, արգելեալք զընդ յառաջ գնացեալ գերապատիւ արքեպիսկոպոսն սրբոյ աթոռոյն անդ ի մէջ Թիֆլիզու զի մի գնացեալք ի սուրբ աթոռն ըստ աղաթական կամաց ամենայն միաբանիցն զարժանաւորն ընտրեալ կացուցեն կաթուղիկոս, և նենգութեան խորհուրդք իւրեանց խափանեալ մնացին:

Աստի անձարացեալք գերապատիւ արքեպիսկոպոսունքն առանձին զրեն ի նոյն օր առ բոլոր միաբանսն սրբոյ աթոռոյն զվախճանիլ Յովսէփ արհելոյն, և զթաղման ազադաւ կտակն և ցնենգութիւն սպասաւորի նորա Գրիգոր վարդապետի, վասն որոյ խորհուրդ տան նոցա և զհամաձայնութիւնսն բացայայտեն յետ այլոց բանից այսպէս:

« Եւ արդ զայս ևս զրել մեր մի՛ աւելորդ համարեալ լիցի և մի յայլ կրից մտաց: Նկատեմք որ դուքէ մինչև ցգալ մեր խօսելոց էք ի մէջ ձեր վասն ընտրութեան կաթուղիկոսի Արդ յայտնի է ձեզ որ ի մէջ և ոչ ումեք գոյ յառաջադիմութիւն առ այն, սակայն և մեք եղբայրակից գոլով ձեզ պարտիք փոքր մի սպասել մեզ, և եթէ ոչ նայիցէք այսքան ինչ յաստուածակոյս կողմանէ անարատ խորհրդակցութիւն: զԿանիէլ պատրիարքն զրեալ էին սրբազան հայրապետիս, զոր աստ: առաջի մեր ընթերցաւ, զի զնա յղեալ են ի Թողթ: Արդ քանզի նա է նախ ըտրեալն մեր հասարակութան ամենեցուն որ և ի պատճառս այս զըկեցաւ ի պատրիարդական աթոռոյն, և յաջորդս գնաց և տաւապեցաւ: Այնժամ աստուծոյ իրաւունքն պահանջէ ի մէջ այլ ևս զնա խնդրել, ընդ որ միանդամ և ազգն հաճեալ: Իսկ եթէ զայլ ոք կանխեցուցանէք, այլ իմն զիւական մտան կայ ջանացող վասն Յովհաննէս պատրիարդին և այլուն, վախմբ թէ և այն ցաւ մեծ լիցի մեզ:

« Իսկ եթէ դուք ամենեքեան սիրով միաբանութեան զպատեհագոյն ինչ ընտրութիւն առնիցէք որ անվնաս լիցի, և Աստուծոյ և մարդկան հաճելի և մեք ընդ ձեզ համաձայն

լինելոց եմք : Վերջապէս Աստուծոյ յանձին լիցին բանք ձեր միայն զԴանիէլ պատրիարզն մի՛ օտարացուցանէք ի սուրբ Աթոռոյն , որում մեղանչելոց էք , այլ թէ զիրաւնց բուն հարջեք , Աստուած ի բարին եզերելու է :

Ողջ լըրուք միմիմարութիւն Հոգւով վշտացելոց

ծառայակցաց ձերոց և եղբարց

Սիմէօն , Անդրէաս , Բարսեղ , Թադէոս , վարդապետաց

1801 Սեպտեմբերի 10

ի Թիֆլիզ քաղաք :

Ահա աստանօր զիւական մասն չիշեալ Գրիգոր վարդապետն անուանեն , որ թողլով զխկապէս արժանաւորն , վասն այլոց ջանայ յաղագս չար նախանձոյն իւրոյ , բոտ որում սրբազան Դանիէլ պատրիարզն ի սրբոյ աթոռոյ միաբանից սրբոսի մօտք և յազդէն ընտրեցեալն էր , բայց թեւադրութիւնք յիշեալ Գրիգոր վարդապետի , և փառասիրութիւնք Յովսէփ արքեպիսկոպոսի , ընդ գրելոյ սոյն արքեպիսկոպոսաց . զըրկեցին զերանելին ի Պօլսոյ Պատրիարկութենէն , յաքսորս առաքեցին , և տառապեցուցին :

Այժմ տմօթ մեծ համարի Աստուծոյ բարեկարգ կամացն խոնարհութեամբ հնազանդ իլն իւր , ջանայ զեսութեան ախտիւն զայլ ինչ նոր չարութեամբ յառաջ ածել , և վերստին առաւել քան զառաջն , զսուրբ Նկեղեցւոյ բարեկարգութիւն , և զըլլոր ազգն խաբբալել և խռովել , որով զՍուրբ Աթոռ մայրն մեր , ի հիմանէ քայքայեալ որպէս և արարն իսկ զորս ի տեղուջ իւրում գրեսցուք :

Սոյն վերոյ դրեալ արքեպիսկոպոսք և առ՝մեծ Կուսակալ Կառլ Ֆէդրիչ կնօրինդն , ի Թիլվիգու յապրիլի 9 գանկատանս զրեն ի նոյն Գրիգոր վարդապետէ և ի քաղաքապետէն որ զինքեանս արզիլեալք անդ , վասն զայլ ոք յառաջացուցանելոյ աշխատին ,

Բայց ի նոյն մարտի 12 ի Պետրբուրգ քաղաքի հզօր Կայսրն ամենայն Ռուստաց յաւիտենական փառացն արժանաւոր առաջին Պափ Պետրովիչն վախճանեալ . և զաթոռ Կայսերութեան ժառանգեալ արդարադատ որդին իւր առաջին Աղբսանդր Պափովիչն , վասն որոյ առ ժամայն աղաղակ արք

եպիսկոպոսացն ոչ կարաց ժամանել յականջ ամենողորմ մեծի Կայսերն , և Գրիգոր վարդապետ դիպուկ ժամ գտեալ ըստ հաճութեան ի Թիֆլիզ . ի Ռուսաստան յերևան , և ի Պսլիս առ Թամարով դեսպանն , և առ Աղանկովեան Գևորգընորոց գրով . որոց գոյիւք և այլոց բանիւ ի մերձաւորս , և ի հեռաւորս հաճոյեացուցեալ զկամս իւր , առանց ուրուք միաբանից գիտելոյ , պաշարեալ է զմիտս բազմաց և քաղաքական կառաւարիչք Թիֆլիզու պատճառս տան չորեքեան արքեպիսկոպոսաց թէ դրեալ եմք վասն ձեր մեծ կուսակալ Անդրէնդն , յորմէ պարտիմք հրամանս ստանալէ և զկնի թողուլ զձեզ ի գնալ , յորմէ հետէ Յովսէփ արքեպիսկոպոսն , Կայսերութեան ծանօթ անձն է և ռոճկառու , առանց նորին ինքնակալութեան բարձր հրամանի ոչ զձեզ կարեմք արձակել աստի , և ոչ զմարմին հանդուցելոյն թոյլատրեմք ի Թալիս աստ , այլ ըստ կտակին իւրոյ պարտիք ի ժամանակին տանիլ յաթոռն և անդ թաղել :

Յաղագս որոյ ի մարտի տասնէն մինչև յունիսի 8 զողորմելոյն մարմինն երեքեւաբար անթաղ մնաց անդանօր որ այսպիսի ինչ ազգի մերոյ կարգաւորաց ոչ երբէք պատահեալ էր բաց ի սմանէ :

Վասն ամենայն զրեցեալ պատճառաց չորեքեան եպիսկոպոսի զրենն առ միաբանսն յսկզբան թղթի իւրեանց այսպէս :

«Ո՛հ թէ ո՞րպիսի ալեաց հանդիպեցաք և յետ վախճանի տեառն Ղուկասու սրբազան Կաթողիկոսին , յարդքանի՞ վատաբախտութիւն տիրեաց միաբանութեան մերում (յետ այլոց բանից ասեն) առաջարկեն մեզ բերել զմարմին հանգուցելոյս , որ վտանգաբերէ սրբոյ տանդ և մեզ նորահնար զժուարութիւն , ոչ կամիմք ամենաին , բայց և բաց ասելն , մնասաւոր է : (զկնի վերաբերեն զայս) քանզի տեսանեմք թէ ամենայն տարակուսելեաց վերջին նիզամն ինքն տէր Աստուած վճարէ , և ոչ այլ ոք » :

Այսոքիկ գրութիւնք չորս արքեպիսկոպոսաց զրեալ ի Թիֆլիզ մարտի 10 . ժամանեալք ի սուրբ աթոռն 13-ին , բայց հասարակապէս ոչ ոք զգայեալ զհետևողութեանց

Գրիգոր վարդապետի ինչ , և ոչ ևս յուսային կարել նորա յայնպիսի համարձակիլ . և միոյ ազդի հոգևորական զլուխ իւրովի յառաջացուցանիլ : Սակայն ի Պօլիս յառաջագոյն վասն Դանիէլ սրբազան Պատրիարքի մահաբարտար Դաւիթ եպիսկոպոս դադանաբար ողի առեալ ի զրուծեանց Գրիգոր վարդապետին , գրեցելոյն առ նոր Նախիջևանցի Կարապետ վարդապետն՝ որ իրր տեղապահ ի Յովսէփ արքեպիսկոպոսէ յառաջ զնոցեալ էր ի սուրբ աթոռն : Առ ժամայն ի լսելն անտի զամենայն , ծանուցեալ յերևան քաղաք Մելիք Արրահամ խնամոյն իւրոյ . քանզի զուստր Մելիք Արրահամին՝ պատկեցեալ է ընդ Բաբսեղ եղբոր յիշեալ Դաւիթ եպիսկոպոսի :

Զմեղքն ևս զդաստացուցեալ խօսիլ ուր հարին է ընդ Մահմէտ խանին Նրևանու , ընդ այլոց նախարարաց և եթէ հնար իցէ շահել զմիտ անդ եղեալ Հայոցն և հարիւրապետից մեքոյ , զի ունիցին հաճութիւն առ Դաւիթ եպիսկոպոսն :

Ապա ինքն Դաւիթ եպիսկոպոս իրր անդէտս եղեալ այսոցիկ ամենից , անցուցանէ զլիշերն զայն , և զորս յուսայր ի միաբանիցն հետեօղ ինքեան , կոչեալ՝ առանձին՝ յորդորէ զնոսա և յառաւօտուն յայտնեն ի մէջ սրբոյ աթոռոյն զվախճանիլ Յովսէփ արքեպիսկոպոսին . և հրաւիրեն զամենեւեան ի մէջ սուրբ իջման տեղւոյն զի խօսեսցին անդանօր հասարակապէս վասն նորոյ ընտրութեան :

Պիտի չարսնակութի :

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄԸ

Գ. Շ—րի. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ ՀԱՆԱԾ

~~~~~

1842 թիւ. օգոստոսի 12 Մաղարթու Նա~

խավկայի վանքումը :

Շարունակութիւն.\*

Պատմութեանս թեյն չկարելոյ համար, չուզեցի ասել  
էս ճանապարհորդութեան մէջին քաջած սրտիս վեշան : Բաց  
աչօք նայում էի ետենում հաւատակիցներէս սպանումը և  
գերութիւնը : Կարող ես երեւակայել, ինչպէս էր. սիրտս եր-  
վում, փթոթվումու նեղանում : Ի՞նչ կարող էի անել : Իմ  
յոյսս մնացած էր միայն դիմել առ Աստուած : Ատրպատա-  
կանը լքցուեցաւ գերիներով : Ինչպէս ոչխար վաճառում էին :  
Շատը, կերակուր չդանելոյ և կամ չկարողանալոյ ձի, ջորի,  
ուղտ դանել վըէն նստացնել բերել իւր գերիքն, ճանապար-  
հին սրախողով էր անում : Նրեանի բնակիչքն և Կաթուղի-  
կոսն, լսում էի ազատում էին որքան և կարողանում էին վա-  
րով և պարգևներով : Էն էլ հազարիցն մինն հաղիւ : Հաղիւ  
էնքան բաղմաւթեան երրորդ մասն մնաց Ատրպատական, մնա-  
ցելոցն քշեցին տարան խորին Պարսկաստունը, մինչև Խօրասա-  
նից էն կողմն էլ անց կացրին :

\* Տես Կոնկան Դ. տարի. ԺԱ. թուումն երես 844

Տարի ու կէս մնացի ես երբեմն թարվէզ և երբեմն Մա-  
րաղայ առանց պաշտօնի : Ծնաւ ինձ մին դուստր որ քանի  
մի ամսից յիտը մեռաւ : Արդւոյս շատ էի սիրում, և մտա-  
դիր էի կնոջս փոքր փոքր յայտնեմ քրիստոնէութիւնս և  
համոզեմ նրան ծածկաբար ինձ հաւատակից լինի : Մինչ  
այս մինչ այն բերանէ բերան լուր եկաւ թէ Շահն գալիս է  
գնաց Ղարաբաղու խանին պատժէ : Էս ասուլիսն հաստատ-  
վեցաւ և գրով : Հա՛ եկաւ եկաւն մօտեցաւ , և մին էլ լը-  
սանք զօրաց ծէրը Ղազվին է հասած : Դող ու սոսկումս ամէ-  
նից սիրալ տիրել էր • ոչ ոք միամիտ չէր իւր կայքի , ընտա-  
նեաց ապահովութեան վրայ : Արդէս լսում էինք էս անգամն  
ուրիշ եղանակաւ էր գալիս : Ա՛յ թէ միայն իւր կատաղու-  
թիւնը ու գաժանութիւնը—յուսահատութիւնից իւր ստո-  
րադրելոց և տիրապետողաց անընդհատ ապստամբութեան  
համար—որ բնական էր նրան , սաստկացրել էր , այլ և հրա-  
մայած էր զօրապետաց և զօրականացը աւարառութիւնը ,  
յափշտակութիւնը և մարդասպանութիւնը անխնայ դործ գնեն :  
Արդէս թէ աստուածային բարկութեան հրամանադիրը , զրաժ  
տուած էին նորա ձեռքն , ոչ ընչացնել բանականաց սերունդն :

Սարգարի հրամանաւը , պարտաւորեցայ հրաւեր գնալ  
Շահի առաջը մեծամեծ ընծայիւք : Զեանդանի ընծայքը և  
զրերն ներկայացրի նրան , որ քաղցր կերպով սկսեց հարցանել  
ինձ Ատրէշանի կառավարչաց , զօրապետաց , զօրականաց և  
բնակչաց որպիսութիւնը : Ես պատասխանում էի զգուշու-  
թեամբ , հաւատ չընծայելով նորա քաղցր զիմացը և խօ-  
սացիութեանը , թէ կարելի է անուանել էնդունք քաղցր :  
Հրամայեց ինձ , Մամադ Հիւսէյն խան Սարքէշէքչի բաշոյ  
վրանումը իջեանել : Ի հարկէ էս մին մեծ շնորհ էր Շահի  
կողմանէ և մանաւանդ մեծ պատիւ , իւր ազգականի և երեւելի  
պաշտականի հիւր լինելս , բայց ես նրա անհաստատ բնու-  
թեանը տեղեակ , աշխատում էի , որքան կարելին էր ինձ հեռի  
պահել նրա կերպարանքիցը թէ և հեռի պահելն ևս վրան-  
դաւոր էր :

Զանգանից երկու օրեան դուրս էինք եկած , մինչ Շա-  
հն ատեանումը յայտնեց թարվէզ չմանելը : Ես , որպէս հրա-

ւիրակ՝ երկրպագութիւն տուի ու աղերսանօք խնդրեցի չզրկէ թալլելովեցուց իւր ամենառատ շնորհքէն ու ոտից հողին երկրպագանելուցը ու հրաշալի կերպարանքի տեսութենէն : Հրաշալի— ի՞նչ հրաշալիւնդ հակառակն դժոխքմբեր, զղուելի : Տես որդեակ , զկնի քանի մի րովպէ լուծեանը ասեց միայնակեացը , տես , քանի քանի գերդաստանաց ծանր պատրժվելոյ , զգիողութիւնների և վշտերի պատճառ էի ընտւում ես էն հրաւիրանօքը : Պարտաւորութիւնս էր որ ինձ ստիպում էր խօսելը հնդէս : Գուրս եկինք ասենէն , ասպնջականիս և Միրզայ Բզայ Դուլի մուկնի—մըմալէքին ևս միջնորդ ձգեցի , որպէս զի խնդրեն Շահն դայ թարվէզ :

Էս տեղ միայնակեացը լուեց , և տեսայ , որ տաքացած երկար խօսալուցը վաստակել էր , վասն որոյ և ես շուտով վերադի ու ասեցի, երբէք էսպէս եռանդով և տեղն ու տեղն չէիք պատմած, հայր , որքան ինձ բաւականութիւն էր էսօր , էնքան Զեզ նեղութիւն :

—Հա՛ , որդի—պատասխանէց նա—էս օրվան անցքը որ ասեցի , կվերաբերէր քրիստոնէից , ուղղում էի և ևս մանրամասն ասել , բայց շատը մոռացել եմ , և ասէի էլ , պէտք էր ո՛չ թէ ինձ , այլ և քեզ ևս վշտացնէի , էստունք էլ բաւական էին :

—Հայր , հարցրի , դուք մին բան մոռացաք ասել կամ թէ չուզեցիք յիշելը , ի՞նչ էր ձեր զաւակի ահուկներ :

—Մինչ իմ գալը իբրահիմ խալիլ էին դրած , բայց երբ ես եկի հօրս անունը դրի այսինքն Ալլահվերդի :

—Ի՞նչ էր ձեր կնոջ անունը :

—Էդ ի՞նչ հարկաւոր է քեզ , վեր առաւ միայնակեացը աչքերը չըռելով :

—Ո՞վ դիտէ , կարելի է ժամանակաւ պատահի ինձ ու գնամ Մարաղայ , հետեղ՝ կհարցնեմ , կիմանամ , կենդանի է՞ , մեռած է՞ ձեր կինը , և թէ կենդանի է՞ , ի՞նչ կարծիք ունի նա ձեզ վրայ : Ահա՛ պատճառն :

—Հա՛ , հա՛ . . . մտքումդ կայ հետեղ ևս գնա՛լ , ասցէ տէր : Ի հարկէ և որդւոյս ևս կտեսնես թէ կենդա-

նի լինի . . . կնոջս անունն էր Գեօհար խանում : Ասեց և սկսաւ լալն : Փոքր ինչ սպասեցի ու վեր առայ, Հայր, էս էլ մոռացաք, որ Թիֆլիզ գնացիք արգիօք ձեր պապական աներն տեսնելոյ :

Միայնակեացն դլխով ցոյց տուաւ թէ այ՛ս, այ՛ս, և հնպէս լուռ մունջ նստեց, մինչ ես էլ անճարութենս էնաւ խաճաշիկս բաց արի, սկսեցի շուտ շուտ ուտել, և մինչև տասն և հինգ ըովպէ կշտացայ ու ժողովեցի, ու իրիկուան գրաճներս մօտը կարգացի, որը ուղղելոյ էր, ուղղեցի ու մնաս բարւով ասելով դուքս եկի : Նա տեղիցը վերկացաւ, եկաւ մինչև քարայրի գոռը ինձ ճանապարհ ձգեց :

Հասայ վանքը փոքր ինչ հանդստացայ, վեր կացայ շարունակեցի սրբազրել և արտագրել էն օրվան գրաճներս :

Երեկոյեան պահ էր, խնդրեցի իբրահիմ Խալիլ աղէն եկաւ ինձ մօտ թէյ խմելոյ : Փոքր ինչ խօսալուց յետը, հարցրի մայրդ կենդանի է :

— Այ՛ս կենդանի է, պատասխանեց :

— Նրա անունը Գեօհար խանում է :

Այ՛ս Գեօհար խանում է : Ասեց ու նայեց երեսիս զտրմացմամբ—էդ ի՞նչ տեղաց քեզ յայտնի եղաւ կրկնեց :

— Մի զարմանար, պատասխանեցի, թէ երկու օր երեք օր ևս մնանք հստեղ, ես ու դու ազգական գուրս կը դանք :

— Կարելի է, վեր առաւ նա, որովհետև մօրս մայրը Հայ էր, որ գերի էր բերված վրաստանի կողմիցը :

Խօսակցութեան առարկեն փոխելով, իբրահիմ Խալիլ աղէն գնաց, ներս եկաւ վանահայրն, որում պատմեցի միայնակեցի թողն լինելը ուղղակիցս, և թէ ի՞նչպէս սրանց իմացումն տալով, միմեանց մօտը տաննը տեսնվին ու խօսան : վանահայրն աւելի ևս փորձուած, շատ համոզելով խնդրեց ինձ, թէ չեմ առած իբրահիմ Խալիլ աղէն, երբէք չառեմ, որից մեծ վնաս կիրի մինաստունը և նորա միարանքն, երբ էս ձեռք տարածուի թէ մահմեդականնի ասպնջական հմք, և թէ, եթէ հաւատ չես ընծայում ինձ, Պօղոս վարդապետն աւելի ծեր, աւելի աշխարհք

տեսած , նրան ևս կանչենք հարցնենք : Մարդ ուղարկեցինք բերել տուինք Պօղոս վարդապետին , որ երբ լսաւ , իմացաւ , աւելի ևս վանահօր կարծիքը հաստատեց : Ի հարկէ ես ևս պարտաւորէի համաձայնել նրանց և լռութեան տալ էս վտանգաւոր անցքն :

Միւս օրը ամենայն օրվան նման առաւօտեան շուտով գնացի դէպ ի քարանջաւն , դաի միայնակեցին դուրսը նստած , իւր սովորական սաղմոսը ձեռքումը : Նրբ ինձ տեսաւ սոի վրայ կանգնեց , վառպեցի մօտեցայ , որ թոյլ չտամ նեղութիւն կրէ ինձ համար կանգնել : Չեղաւ , վեր կացաւ , փոքր ինչ ոտի վրայ երկուքս կանգնած կացած զոյց տուինք , նա իմ առողջութիւնը , ես նրանը հարցնելով նստեցանք : Աս իմ գրածները սկսեցի էս օր յառաջ ձգել և կարգաւ նորա մօտը : Նրբ վերջացրի , ասեց միայնակեացն ուրախ դիմօք և կիսածիծաղ , հիմի իմ խօսելոյ շարքն եկաւ : Հրամարես ասացի , խնդրեմ :

Հա , շարունակեց միայնակեացն , հա , երբ ես միջնորդներ ձգեցի Շահի մօտը թարվէլ դալոյ համար , մի և նոյն օրն էլ սուրհանգակ զրկեցի թարվէլ Սարգարին իմացում տալ Շահի նպատակն : Սարգարն տասն հազար . թուման ընծայ էր զրկել և մին աղերսագիր էր զրկել Շահին , որպէս զի զայ թարվիզու վրա՞ն գնայ Ղարաբաղ : Նրբ էստունք նեղկայացրի Շահին , ծիծաղելով խօստացաւ կատարել Սարգարի խնդիրքն , վասն որոյ և բանակի չուն ուղղեց դէպ ի թարվիլ :

Թորասան , Յարս—Արաղ , Բուլւղխտան և Մաղանդարան , և բոլոր արեւելեան Պարսկաստունը հնազանդած էր նրա զրօշակին , մնում էին Ատրպատականի քանի մի փոքր խանութիւնները , որ ապահովացնէ իւր թագաւորութիւնը : Որքան յառաջ էինք գնում , էնքան ստուարանում էր բանակն : Մտիւ չէ , երեկի ասեցի թէ ոչ որ իւր երկու եղբօր որդիքը ևս հեան էին , որոյ արդէն թագաւորականց տիտղոսով էին անուանում—մինը Աբրաս միրզայ և միւսն Մամադ Ղուլի միրզայ , որոց հօր խկական անունն էր Յաթալի , բայց Խանբախայ խան կասէին , որ զեռ ևս

Շահի տխուր չունէր :

Ուր որ անց էր կենում, չորեք կողմի մեծամեծներն, երեւելիքն մեծամեծ ընծաներով էին գալիս ներկայանում : Չեանդիանու հաղիւ քսան օրումը հասանք Թարվիզ, ուր տասն և վեց օր կացանք ու չուեցինք գնացինք բանակով Ղարաղաղու վրոյն զէպ ի Ղարաբաղ : Ինձ կրկին յանձնեց Ատէրբէժանի հեծելազօրաց հրամանատարութիւնը : Տասն և չորս օրումը քայլելով էն բարձր Ղարաղաղու լեռներու և անվերջանալի անտառների միջովը հասանք Արագի ափն, ուրոյ կամուրջն Կրբահիմ խանը աւելել էր տուած վասն որոյ չորս օր էնտեղ բանակին հանդատութիւն տուեց մինչև փայտից կամուրջն նորոգեցին : Շահի էնպէս ծանր գնալուցըն, մեք կարծում էինք որ ուղում էր Կրբահիմ խանի սիրալ երկիւղ ձգէր, որպէս զի նա փաշիմանի կամ միջնորդ ձգէ կամ դեսպան ուղարկէ կամ ինքն գոյ և ներումն խնդրէ : Իրաւունք ունէր Շահն էնպէս մտածելն, ըստ որում նրան լաւ յայտնի էր Շուշի բերթի ամրութիւնը և անառիկ լինելն : Արագիցն մին օրվան ճանապարհ հեռացած էինք, յանկարծ լսեցինք թէ Կրբահիմ խանը թողել է Շուշուայ բերթը փախել գնացել է Գաղբասան լեռնականաց մէջը, թէ և միւս օրը հաստատեցին թէ գնալն Գաղբասան սուտ է, այլ դուրս է եկած ամրացած Գեօղչայ (Սեանայ) լեռանց մէջը, և թէ մեծ զօրք ունի ժողոված զլսին :

Եսպէս էնպէս, Շահն ահանջ չգրաւ, հրամայեց բանակին չուել գնալ զէպ ի բերթն : Արրորդ թէ չորբորդ օրը, քանի մի ժամաչափ ճանապարհ մնացած մինչև Շուշի, ընդ յառաջ եկին մեզ բերթիցն հրաւիրակներ : Շահն գնաց մտաւ բերթն չորբորդ մասնի մին մասն զօրքովը, մնացեալքն էտեղ էնտեղ բերթի մօտիկ շրջակայքումն բանակուեցան : Քանի մի օր անց կացաւ պաշարն սուղացաւ, ըստ որում շրջակայ զիւղօրէքանցիցը ուտելիք պաշար բերելոյ ժամանակն անգուստ զօրականներն խլում էին յափշտակում ողորմելի զիւղականաց ձեռքիցը : Դրսի զօրաց համար զիւրին էր յափշտակելն, որովհետև ցրվում էին 7. 3 փարսախաչափ հեռի զիւղօրէից մէջն, կամ բերթն բերելիս, ինչ գնաւում էին

խլում էին , բայց բերթումն դանուած զօրականաց Տամար մեծ գթութութիւն էր . ոչ գանձարանից դրամ էր զուրս պալիս , և ոչ վաճառող կար որ զօրականները դնային դնէին — լինէր էլ վաճառող . զօրականը դրամ չունէր տար դնէր : Ար կողմը նայում էիր . պարտաւոր էր զօրականը յափշտակութեամբ յաղհնալ : Անճարութիւնից , զօրականներն սկսեցին բռնութեամբ մտնել քաղաքացւոց տները , ուր ինչ գանուակէին խլում էին , երբեմն չտուողին կամ հակառակողին սպանում էլ էին : Ամենայն օր բնակչաց գանդատանքն աւելանում էր : Թէ և ողորմելիքն գանդատում էին , բայց ո՞վ էր նոյա լսողն : Եթէ բնակչաց բողոքանայն լսելով , զօրականներին պատժում էին , զօրականներն էլ միմեանց աջակցութեամբ — իրաւունք ունէին քաղցածութեան համար միմեանց օգնել — անհնազանդութեան նշաններ էին ցոյց տալիս : Զօրականքն երկու անգամ ժողովեցան Շահին դրանը Եալլահ , Եալլահ զուարթին , թէ քաղցած ենք հաց տուր մեզ կամ հրաման ա՛ւր դնանք մեր տներն : Կա պատճառ էր տուած Շահին կասկածել , որպէս թէ իւր աւադանիքն են ևս զօրաց անբաւականութեանը պատճառն կամ սովորցնողքն : Արա էլ պատճառն էն էր , որ պալատականները և զօրավարները միմեանց հետ թշնամի էին , այսինքն Ֆարսերն և Թուրքերն երկու կողմնակցութիւն էին բաղկացրած : Շահն ևս բանէրի վրայ ժանտացած էր , երկու կողմանցն էլ ունին էր դնում , երբեմն մինին երբեմն միւսին առանց ճիշտ վերահասութեան պատժել էր տալիս և պաշտօններինն տաւում ձեռքերնուցը ու անարժան կամ վատ աղբի մարդկանց տալիս : Զարմանք էլ չէր , որ խորագէտ Շահն ևս հնարքն էր զործ դնում , որպէս ղե երբէք չհամաձայնվին իւրեան կորստեանը համար :

Ընդ հակառակն օր ըստ օրէ մատնողութիւնները և քսութիւնները սաստկանում էին պալատականաց , զօրավարաց , և զօրաց մէջը և ամենայն հաւատարմութիւնը վեր էր կացել , ոչ ոք չէր համարձակվում լաւ կամ վատ խօսել մինի հետը , լռելն անգամ վտանգ էր բերում մարդոյս : Շշունչ կար թէ Շահն հրամայել է պահապանները աւելա-

ցընեն և զիշերվան զգուշութիւնն ամրացնեն : Ամենայն երեւելիքն իւրեանց կեանքն կասկածանաց ու վտանգի մէջ էին տեսնում, որովհետեւ օր չէր լինում, որ մինը կամ երկուսը նոցանէ, սուտ կամ ճշմարիտ, յայտնի կամ ծածուկ մին յանցանաց պատճառաւ չկորցնէր իւր կեանքն : Կս էր պատճառն, որ միմեանց մօտ գնալ դալն կտրած էին, և Շահի զրանն էլ կամ Առնից զուրս զալիս ևս միմեանց հետը խօսելը երկիւղ էին կրում :

Օր ըստ օրէ սպանվելոց թիւն աւելանում էր : Ոչ միայն հարուստ բնակչացը, այլ և իւր աւագանեացը սուտ մոլտ պատճառ բերելով տուժում էր, բռնութեամբ նոցանէ զրամ էր փոխ առնում : Որպէս բնական հակված զէպ ի անիրաւութիւն, օր քան զօր կասկածանքից, իւր տանն արարմունքների հիմն բռնութիւն էր արած. շատ չքաշեց էս անիրաւութեանց բաժակն լըտցաւ և պէտք էր պատժուիլ նա, որ ոչ մարդասիրութիւն և ոչ կարեկցութիւն ունէր : Մին օր հրամայեց իւր եղբոր որդւոցն, որք իւրեան ժառանգներն էին, զուրս դնան բերթիցն, ուր կհաւանեն, էն տեղ վրան խիեն, որպէս զի երբեմն երբեմն զնայ և ինքն նոցա հիւր լինի նախաճաշել և կամ ընթրիք անելոյ :

Իմ հեծեալօրը բերթիցը զուրսն էր բանակված ներսումը կեր և կերակուր չլինելոյ համար, և միայն հարկւորական ձիաւոր ունէի մօտս պատրաստ, որ երբ Շահն ձիաւորվի, ևս ևս իմ ձիաւորներովը հետը ձիաւորվիմ : Ինձ էլ միշտ երեկոյեան պահին առաւօտեան համար, առաւօտեանը կեսօրիցը յետոյ ձիաւորվելոյ համար լուրն կտային զանիցը : Մին ուրբաթ օր, ընդդէմ սովորականի, առաւօտեան լուք տուին, թէ Շահն իսկ և իսկ գնումէ եղբոր որդւոց մօտը նախաճաշել անելոյ : Շատ վաղելով հազիւ կարողացանք հասնիլ Շահին բերթի զրանը : Երեկոյեան պահին մինչ վերադառնումէր բերթն, դեռ ևս բերթի զուրսն էր Շահը ներս մտած չմտած յանկարծ կանանց և երիտայից ճիւղ և աչաղակը բերթիցը բարձրացաւ : Երբ և ինքն Շահն հենց զրան մէջն մտաւ, հարի ըստ որ կանայք և ե-

ընկալք ընկան նոյն ձևովն ու լայնովն նորա ձիոյ օտի տակը , թագաւորն ողջ լինի ողորմութիւն արա՛ մեզ բղաւեւով : Նոցա աղաղակիցը և յանկարծ երկրամած լինելուն , Շահի ձին խրանեց : Էս անսովոր պատահանքիցն Շահի երեսի—թէ և բնական գոյն չկար—սփրանեց : Առանց խմանալոյ ողորմէլեաց լալոյ պատճառն , շատ զայրացաւ առաջինթաց սպասաւորաց և աւագանեաց վրայ , թէ ինչէ՞ թոյլ տուիք հսպիսի տեղ դոցա կանգնելն : Շատ վատ խօսքերով հայհոյելուց յետը , վեր առաւ , գիտեմ , գիտեմ , հսպիսի միջոցներով և հնարքներով ուզում էք ինձ երկիւղել մէջ պահել , երդնում եմ սուրբ Աւերանը և մարդարէի գլուխըն , որ մին քանի մարդկանց գլուխները , վաղն մինչև արեգակի բարձրանալն գիւղեւոյ են վրանիս առաջին : Յայտնի էր ամենիս , որ նրա բերանէ դուրս եկած պատիժն , անգառնալի էր :

Աղերսարիւռքն տեսնելով Շահի զայրանալն , և հեռակա սպասաւորքն ևս նրանց փետերով ծեծելով , փախան ու հեռի կանգնեցան : Էն միջոցին , որ Շահի ձին խրանեց , յետնէն գալիս էի ես , իսկ և իսկ վար թռայ , նրա ձիու երասանակն բռնելոյ , վասն որոյ և Շահն ինձ հրամայեց խմանալ կանանց և երեսայից խնդիրքը ինչ են : Կանայք չխորողանալով մի ըստ միովէ իւրեանց խնդիրքն ասեն , հասկացնեն , քանի մի սպիտակամօրուս տղամարդիկ , որ էն տեղ փոքր ինչ հեռի նրանցից կացած էին , պատմեցին ինձ պատճառն : Աս վառղ քնեցի , հասայ Շահին , երբ ձիուցը իւր մեծ վրանի առաջին վայր էք իջնում , ասեցի ինչ որ լսած էի , այսինք ժողովրդոյ դանդաթն է զօրականաց անիրաւութեան վերայ , որք մանուկն անիրն , կողպաումեն , ինչ տանից ծուխ է դուրս գալիս , պատերիցն են թափվում , բաւական չէ ինչ տեսնում են , բռնութեամբ տանում , երբեմն ողորմելի կանանցը չարչարում են որպէս զի թէ ծածուկ տեղ փող , պղնձեղէն և շորեղէն ունեն յոյց տան :

Շահն հատունք մինչ լսաւ , աւելի ևս զառնացաւ Հրամայեց զնա առանոցա վաղն ես վերահասու կլնեմ և կալուածեմ ամէն յանցաւոր զօրականաց և նրանց հրամանատարներին :

Շուռ եկաւ իւր սպասաւորացը երկուսին , անուամբ յիշե-  
լով , հայհոյիլ , թէ երեք օր յառաջ գլխներնիդ էիք գրաւ  
դնում , եթէ ճշմարիտ լինի ժողովոյի անբաւականութիւնը ,  
էս ի՞նչ է ուրեմն , աղգականներնիդ կողմն էլ՞ք պահում : Վաղն  
ես ցոյց կտամ ձեզ : Ասեց ու ներս գնաց վրանը : Ինքն  
ներս գնաց , բայց ողջ մեծամեծաց գլխին ջուր մաղուե-  
ցաւ :

Պիտի չարունակուի :

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԻՃԱԿԸ

ՆԵԿՈՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ ԴԱՐՈՒՄԸ .



Քրիստոնէութիւնը.—Նորա արտաքին ձևերը.—  
Եփոթները.—Միութեան պատճառները.—Ենորհա-  
ւին, Լամբրոնացին.—Նրանց արժանաւորութիւնը.—  
Տուտէորդին կամ արևելեան վարդապետները:

Շարունակութիւն \*

Ենորհալին ու Լամբրոնացին այն արժանաւոր ցեղի շա-  
ռաւիղներն են , որին Հայը իր մարմնովը և հոգւովը պար-  
տական է : Այս երկնապարզ անձերը , մանաւանդ Ենոր-  
հալին , սիւն են եղած Հայաստանի լուսաւորութեան հաս-  
տատութեան և անշիջանելի ճրագ շատերի խաւարը փարա-  
տելու : Ենորհալի ասելով Հայը պէտք է ներկայացնէ մի  
անձնագիր հովիւ և արժանաւոր ժառանգ Հայաստանեայց  
Լուսաւորչին թէ ըստ մարմնաւորին և թէ ըստ հոգւորին :  
Այս անձը Հայի հոգւոյ հատորն է , որոյ մէջ փայլում է  
ազգային նախանձ և նորա յառաջագիմութեան համար ան-  
խոնջ ջանացողութիւն : Լամբրոնացի ասելով—մի անսովոր  
անձնաւորութիւն , որոյ հոգին բարձրանում է ազգասիրու-  
թեան զգացմունքի սահմանից և ընդհանուր Քրիստոնէու-

\* Տես Կոնկան Դ. ԺԱ թուումը երես 869 :

թիւեր իր աղբակիցներէց նախապատուում: Սա ամենայն բան զոհում է քրիստոնէական բուն ոգւոյ համար: Ազգը և ազգային աւանդութիւնները նախատոււմ է. իրան համարում է ոչ թէ անդամ ազգի, այլ քրիստոնէութեան, ուրեմն և մարդկութեան: Այս մի շատ հազուադիւտ հանճար է, որ բնութեան օրէնքին ևս կարողացել է յաղթել և իր առաջին միեւնոյն արժանաւորութիւն են ստացել միմեանց արեան ծարաւի Հայը, Յոյնը, Լատինացին, Ասորին, Եգիպտացին և այլն: Քրիստոնէութիւնը տասներկու դար քարոզուելով շատ քիչերն է յղացել այսպէս ոգու տէր լինելու: Քանի՞ վսեմութիւն է ստացել Հայկական Ոսկեբերանի սրբաւոր քրիստոնէութիւնը, որ Հռովմայաւ ժողովքին մէջ բաց է անում իր սիրտը տսելով. «Թողեալ զանուն Քրիստոսի Հայկին», Արամայ Հռովմայ և Ելլենացոյ անուամբ «մեծաբանեմք ի վերայ իրերաց» . . . . Ձիւարդ երկրորդ համարեալ մեր զանուն Քրիստոսի, որ ի վերայ մեր մեռաւ, «նախնեօք հեթանոսօքն պարծեմք» . . . : Մի գլուխ ունենիմք գ-Քրիստոս, միոյ գլխոյ անդամոց զճարդ հնար է ի միմեանց պառակտել»:

Որ քրիստոնեայ այս հետեւեալ տողերը կը գրէ իրան դատապարտողին մօտ, երբ նորան անկարգ էին համարում օտարի հետ խառնուելուն համար. «Անկարգութիւն իմ այն է, որ ընդ ամենայն քրիստոնեայս հաղորդիմ: Գիտելի է իմաստուն քննողաց, որ քրիստոնէից ազգ բացատրին ի միմեանց իւրիւրիւր: Իսկ շնորհն Աստուծոյ զօրացոյց զէս զայս «սնոտի աւանդութիւն նոցա զիտութեամբ արհամարհել և զսէրն նախապատուել և էինձ Հայն որպէս զՀելլենացին, Հելլենացին որպէս զԼատինացին, Լատինացին որպէս զԱսորին և Ասորին որպէս զԵգիպտացին: Արդ թէ ես միոյ ազգի «Չատաղով էի ընդ այլս երբ էր կար հաղորդիլ. բայց ընդ իւրաքանչեւս, որ միմեանց թշնամիք են խառնեմ և զընաւս «Հահիմ ըստ Քրիստոսի առաքելոյն»»: Քանի սքանչելի շնորհաց զեղմունք է, որ Ներսէս իր մարգարիտ խօսքերովը բաց է անում քրիստոնեայ սիրտը ապագայիս առաջին: Լամբրոնացին, թէպէտ այս հանճարի տէրն էր, բայց չըկա-

